



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

171860

7-70





17
7-70

W

25

ԲԱՐՈՅԱԿԱՆ Ք
ՊԵՌՏՐՔԱՅ

ԹԱՐԴՄԱՆԵԱ Ի ԳԱՂՎԱԿԱՆԵ

ՏՊԱԴՐԵԱԼ ԱՐԴԵԱՄԲՔ

ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՇԻԿԹԱՇ



ԵՐՐՈՐԴ ՏԵՏՐԱԿ



ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Տ. ՍԱՐԳՍԻ
ՄՐԲԱԶԱՆ ԱՐԿԵՊՈՍԿՈՊՈՍԻ



Printed in Turkey

6
2
7

Ի ՂԱԼԱԹԱ Կ. ՊՕԼՍՈՅ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՌԿՎԱՆՆՈՒ ՄԻՒՀԵՆՏԻՍԵԱՆ

— 1860 —

9023-УМ

404-УЗ



1876

39



Ի ՅԻՇԱՏԱԿ

ԱՆՄԱՀ ՀՈԳԻՈՅ

Ց. ՆԻԿՈՂԱՅՈՍԻ Մ. ԶՕԲԱՅԵԱՆ

Յարգասու հակիրճ 'ի կենսիդ մաշեալ ճիգն
եւ ջոյժ

Արդի Սատարաց Ազգիս իրաւամբ
բարձրնտիր .

Որ Քոյոցդ ցանգ 'ի նդաստ կարեաց եղեալ
ուշ

Կենցաջօգտից կացեր վարժից ներհուն
թեշադիր :

Օգտեալք Տնտեսեչ , Բանասիրեչ նա' 'ւ ա-
ջարժին

ՅԱրիւոյդ աղածամ սքօջեչ Մասեաց
ուգւոցն 'ի կայս ,

Ոչ Մահու գնեն մեց , այլ անցնիւր գժիեմ
բացդին .

(Երկին , ջարժանի մեց սաստիցդ անցն ,
ջրաժակս :)

Հոգիդ վեհ , վեհից հոգւոց ջարդիս շեալ
կաճառորդ ,

Չոյդ 'նցին ճշմարտի բարւոյ Քոյինդ Ազգի
Չինչ կենդանեաւդ առ Պսակչիդ յաւեջցիս
միջնորդ

Ի ջրումն ըջձից իոց կարեցէր մտերմիդ
սրտի :

Բարեացապարտ Ընկերութիւնն

31 Յոնիւար, 1860.

Թէպէտ արժան և իրաւ Ազգայնոց մտաւորական յառաջադիմութեան օգնող Բանասիրին բազէզնապատ մահարձան կանգնել հրապարակաց անկիւններուն գլուխը, խմատնոց մը ըսածին պէս, սակայն այս բազգը դեռ վայելած չըլլալովնիս, մասնաւոր միջոցներու դիմել կը հարկադրինք, գոնէ սրաի բաւուն զգացմունքը անուղղակի գոհ ընելու: Այս մտօք վերոյիշեալ հազուագիւտ հանճարաւորին, (որ գրոցս Գաղղիերէն բնագիրը, մըխիթարութեան կարօտ ժամանակիս յետնութեանս ընծայեր էր,) օրհնեալ յիշատակը անմահացընելու մտաբերեցի: Իրաւ տըկար, սակայն աւելի կարողաց արժանը տընօրինելու գրգիռ մը տալու միջոցով, ոչ բողբոլին խտելի: Կաղաչեմ, Տեաքք, որ բարեհաճիք այս երրորդ տետրակիս սկիզբը իմ այս քանի մը տողերս ալ տպագրել տալու:

Ձեր բարեմտութեան

Խ. Տ.


Կ. ՉՈՒԻԱՃԵԱՆ

Printed in Turkey

ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Պլուտարքոս յետագայ ճառին մէջ շո-
ղոքորթին բոլոր խորամանկութիւնները կը նշա-
նակէ, անոր խիստ խորունկ թափանցող աչ-
քէն ազատ մնալու համար, կը բացատրէ
անոր երեսանց ճշմարիտ բարեկամի նմանել
ձեւանալը: Կը նկարագրէ շատ զարմանալի
եղանակաւ այն զանազանելու կերպերը որոնք
շողոքորթը բարեկամէ զատելու կը նպաստեն,
ու ասոնք այնքան նրբամտութեամբ կը պար-
զէ, որ ամեն մարդու դիւրին կըլլայ որոշել
որպէս զի իրենց անձնասիրութեամբը ինչու ան
չտեսնելու տեղի չտան: Շողոքորթին անկեղծ
բարեկամ ձեւանալու և մտրոցընելու գործա-
ծած ամենէն ապահով ու ճարտար եղանակին
մէկն ալ, ազատաբերութիւնն է, կ'ըսէ, այն
ճշմարիտ բարեկամութեան մրցանակը եղող
յանդիմանելու արիական համարձակութիւնը:
Նաև մասնաւորապէս ու ժով ձեռք կ'առնէ
Պլուտարքոս՝ բարեկամութիւնը յայտնի նկա-
րագրող այն ազնուական համարձակութիւնը
որոշելու եղանակը՝ այն կեղծեալ ազատաբե-
րանութենէն, որ շողոքորթը կը գործածէ
միայն խաբելու համար, վերջը կը հաստատէ
վսեմ կանոններ այն եղանակին վրայ, որով

բարեկամները կը պարտաւորին իրենց պակասութիւնները մէկմէկու խմայրներու փոխադարձ համարձակութիւնը մէջերնին գործածել, որպէս զի ազատ մնան այն առիթներէն, որ կրնան յանդիմանու թե՛նէն վերցընել բոլոր փրկարար ներգործութիւնները՝ զոր բնականապէս առաջ կը բերէ, թէ՛ որ բարեկամութեամբ եղած ըլլայ :



ՊԼՈՒՏԱՐԻՈՍ

ՅՈՅՆ ՓԻԼՍՈՓԱՅԻՆ ՃԱՌԸ

ԹԵ ԻՆՉԳԵՍ ՊԵՏԻ Ե ԲԱՐԵԿԱՄԸ ԸՈՎՈՒՌՈՐԹԵՆ
ՈՐՈՇԵԼ

ԻՄ ՍԻՐԵԼԻ ԱՆՈՒՅՐՈՍԱՍ :

Պլատոն ըսած է թէ ամեն մարդու չափազանցու թեամբ ինքզինքը սիրելու համար ըրած խոստովանու թիւնը սրտի մտօք կը ներուի . բայց աս անձնասիրու թենէն առաջ եկած շատ մելու թիւններուն մէջը ամենէն վատանգաւոր մը կոյ որ մարդուս իր անձին արդար ու անաչառ դատաւոր ըլլալուն արգելք կ'ըլլայ . վասն զի բարեկամու թիւնը մեղի մեր սիրած բանին վրայ դիւրաւ կը կուրացընէ . թէ որ խելացի դաստիարակու թիւն մը մեղի ըստ ինքեան բարի ու ազնիւ եղած բանը զատ կերպով մեր անձը գրգռողէն նախամեծար սեպելու վարժեցուցած չ'ըլլայ : Ասկէ զատ անձնասիրու թիւնը շողքսրթու թեան առջին ընդարձակ դաշտ մը կը բանայ որ մեր վրայ յարձակի , ու բարեկամու թեան երեւոյթներով մեր վստահու թիւնը գրաւէ : Եւ որովհետեւ անձնասիրու թիւնը

մեզ ամեն մէկերնիս մեր անձինն առաջին և ամենէն մեծ շողոքորթ կ'ընէ, դուրսէն եղած շողոքորթներուն գիւրին ճամբոյ մը կը բանայ որ անոնցմէ մեր վրան ունեցած աղէկ կտործիքներնուս շատ վկայներ ու հաւանութիւն տուողներ ունենանք :

Շողոքորթներ սիրելուն համար իրաւամբ զատանուն եղած ամեն մարդ միշտ մօլեգնաբար ինքզինքը կը սիրէ, և սա կոյր սէրը կ'ընէ որ ամեն կատարելութիւններ ստանալու կը ցանկայ ու կը հաւատայ : Իրաւ, կատարելութիւններ ունենալուն ցանկութիւնը անբանաւոր չէ, բայց կատարելութիւններ ունենալուն վրայ համալուած ըլլալը սխալմունքի ենթակայ կ'ըլլայ, ու սէտքը չէ մարդուս գիւրու մը անոնց հաւատք ընծայել :

Թէ որ ճշմարտութիւնը աստուածային ստորոգելի մ'է, ու Պղատնի քոածին պէս, շատուածներուն աւ մարդոց բոլոր բարութեանց աղբիւրը, արդեօք շողոքորթը շատուածներուն թշնամիի կարգ չպիտի անցնի, մանաւանդ Պի թեան Աշողունիս որուն հրաշակաւոր ճշմարտ պատգամներուն (1) անգագար գէմ կը խօսի . ԾԱՆԻՐ ԶՔԵԶ : Սի թէ շողոքորթածները չխանքեր, ու անոնք իրենց անձը, ու իրենց աղէկ ու գէշ բնաւորութիւնները չճանչցող թողելով պատճառ չընլար արդեօք, որ ոմանք անկատար մնան, ու չբիշնէին ալ անուղղելի ըլլան :

Թէ որ շողոքորթութիւնը ինչպէ՞ս որ սգ.

բիշ մուր թիւններուն շատն ալ մի միայն ցած
 ու աննշան մարդիկները շատ անգամ խան-
 գարէր, գուցէ անկէ զգուշանալը շատ դիւ-
 բին ըլլար: Բայց ամենէն հակուղ փայտերու
 մէջ աւելի դիւրաւ առաջ եկող որդերուն
 պէս, աւելի բարձր հագններու կը փակչի,
 զորոնք իրենց բնաւորութեան չափազանց զի-
 ջումն ու քաղցրութիւնը՝ խաբուելու աւելի
 ընդունակ կ'ընեն: «Խեղճ արհեստաւոր մը
 չէ, կ'ըսէ Ախմէնիգէս, հասպա լաւ գետններ-
 բու տէր մ'է որ կրնայ ձիեր պահել:»

Նմանապէս խեղճ տկար ու անծանօթ
 մարդոց շփակչիւր շողոքորթութիւնը, հասպա
 հարուստ տուններու, թագաւորութիւններու
 և ինքնակալութիւններու անգամ, որոնց շատ
 հեղ կործանման պատճառ եղած է:

Արեւմտեան հարկաւոր բան մ'է ասիկա
 ճանչնալը և ասոր համար շատ մեծ խո-
 հեմութիւն պէտք է, որ չըլլայ թէ շողո-
 քորթութիւնը ինքզինքը դիմակաւ ծածկելու
 վարպէտ ըլլալով, ճշմարիտ բարեկամութեան
 վրայով սիրտ նեղացընող կասկածներ տայ
 ու ճշմարիտ բարեկամութիւնը դրոպարակելու
 վտանգին մէջը ձգէ: Ինչպէս այն միջատնե-
 րը որ դիակէ մը վազած զիրենք սնուցանող
 արիւնը դադրելուն պէս, իսկոյն այն դիակը
 կը թողուն կերթան, ասանկ ալ շողոքորթը
 կը տեղաւորի չէ թէ ան մարդոց տունը ո-
 թոնց գործքերը գէշ վիճակի մէջ են, հասպա
 անանկներու տուն՝ զորոնք յարգի ու իշխա-

նութեան մէջ կը տեսնէ . հոն տեղ անոնց
 ծախքովը կը գիրնայ , ու առաջին ձախք
 դութեան ատեն անկէ կը հեռանայ , կամ
 տեւէ հարուստ ճը որ գտնէ , առջինը խոյն ին
 լուղու , առջինին իրեն ըրած օգնութիւնը՝ երախ
 րիւր ին ճոռնայ , գուշէ նաև առջինին յետոյնը
 Լեւոնի գրածն ալ ընտելեր : Եղբորս թը ճանչ
 նալու համար անօգուտ կամ միանգամայն
 վտանգաւոր փորձի մը շկենանք սպասենք :
 Դժուար գալու բան է որ մէկը իրեն բարե
 կամներուն կարօտութիւն ունեցած ատենը ,
 փորձով հասկընայ թէ ամենեւին ճշմարիտ
 բարեկամ չունի , և երկու երեսէ ու թեթե
 ւամիտ մարդոց տեղը՝ հաստատ ու ճշմարիտ
 սրտի տէր մարդոցմով լէցընէլ շկընայ : Ուրեմն
 փորձենք մէկ բարեկամ մը , ինչպէս որ դրամ
 մը կը փորձուի գործածելէն առաջ , ու չք
 սպասենք որ նոյն իսկ գործածութիւնը մեզի
 անոր խարդախեալ ըլլալը յայտնի ընէ : Եղբ
 քորթ մը ճանչնալու վարժուիք անոր մեզի
 միաստ հասցունելու կարող ըլլալէն առաջ , ու
 չէ թէ մեզի միաստ տուած ատենը : Այլա թէ
 ոչ՝ մերինը ան անխոհեմ մարդոց նմանել մը
 կ'ըլլայ որ մահաբեր թոյնի մը ու ժը հասկը
 նալու համար , անով փորձ ընէլ կըսկոսին ու
 անոր ներգործութիւնը՝ իրենց կեանքը վրայ
 տալով միայն կը ճանչնան :

Բայց ասանկ շատ մեծ դիւրութեամբ մը
 շողքորթը դարովելլովս՝ սխտի հաճեցընեմ ար
 դեօք անանք , որ թէպէտ կ'ուզեն թէ բարե

կամուժիւնը միշտ եղածին պէս պարկեշտ
 ու օգտակար առաջադրուի, բայց իրենց ներ-
 հուն վարմանցը մէջ քաղցրութիւն ու զուար-
 ճութիւն մտցընող բարեկամները շողքոր-
 թութենէն յաղթահարուածի պէս կը նկա-
 տեն: Չէ՛ իրաւքնէ բարեկամ մը ոչ դաժան
 է ոչ ալ բիրտ, ու բարեկամութեան հա-
 մետութիւնը՝ սովորութիւններու վայրագ
 խտութեան մէջ չկայանար: Իւր գեղեցկու-
 թիւնն ու արժանաւորութիւնն անգամ
 քաղցր ու սիրտ քաշող է: Բարեկամութեան
 քովը, կ'ըսէ Հեսիսդոս: «Շնորհքներն ու
 փափաքներն իրենց կայանքը հատաաւեր են»:
 Գոնէ, Եւրիպիդէսի ըսածին պէս «Անանկ
 դժբաղդ մը չէ, որ զուարճութեամբ բարե-
 կամի մը նայուածքներուն պատահի»:

Բարեկամութիւնը՝ մեր կենաց անբաժա-
 նելի ընկերը, մեր կեանքին յաջողութեանը
 վրայ այնչափ քաղցրութիւն ու գեղեցկու-
 թիւն շտարածեր, որչափ որ դժբաղդու-
 թեան ատեն մեր շփոթելը ու մեր նեղու-
 թիւնները կը քիչցընէ: «Կրակը, կ'ըսէր Եվե-
 նիոս, ամենէն աղէկ համեմ է (2): Ահա Աստ-
 ուած բարեկամութեան քաղցրութեամբը մեր
 կեանքը ասանկ համեմելով, միշտ պատրաստ
 վայելքներ տուած է, որոնք որ մեր օրերուն
 վրայ ամենէն քաղցր զուարթութիւնը կը
 տարածեն: Ու թէ որ բարեկամութիւնը հա-
 ճելի բան չըլլար, շողքորթը ինչպէս պիտի
 ճամբայ գտնէր ըստ քմաց վարուելով մեր

քովը շնորհք գտնալու : Շողոքորթը այն կեղծ
 սակիէ ամաններուն նման , որ միայն ստոյգ
 սակիին փայլունութիւնը ու սղորկութիւնը
 ունին , միշտ ուրախ , միշտ ծիծաղերես ե-
 րեւցող բարեկամի մը քաղցրութեանը ու նե-
 րողամտութեանը նմանելու համար չէ , որ
 բանի մ'ալ գէմ չկենար ու ամենեւին հա-
 կառակ չլսօսիր : Մէկու մը փոյ շողոքորթու-
 թեան կասկածի չպիտի երթանք , երբոր ա-
 նոր բարեկամ մը գովելը լսենք : Բարեկա-
 մութեան միօրինակ կը պատշաճի յարմար
 ժամանակ գովելն ալ , պարտաւէլն ալ : Մա-
 նաւանդ տխուր բնաւորութիւնը որ միշտ
 կշտամբելէն առաջ կուգայ , բարեկամութիւ-
 նը ու կեանքին ընտանութիւնը պիտի աւ-
 րէր : Ասոր հակառակ առանց դժուարու-
 թեան կամ մեծ փոյթով մ'ալ իրեն վկայ կե-
 ցած աղէկութիւնը գովող բարեկամը , կրնայ
 մի և նոյն աղատութեամբ գէշութիւնն ալ
 պախարակել : Ասոր բարեոէր կամքը հաս-
 տատ գիտնալով , յանդիմանութիւններն
 համբերութեամբ ընդունինք , և անոր մեզ
 գովելու ղիջանեւն ալ փորձ մ'է , թէ միայն
 հարկաւոր եղած ատենը կը կշտամբէ ալ :

Բայց պիտի ըսէ մէկը թէ շատ դժուար
 կ'ըլլայ շողոքորթը բարեկամէն որոշել , թէ
 որ ասանք ոչ գովելու նախանձով , ոչ ալ ու-
 րիշի հաճոյքը կատարելով շէն տարբերիք ի-
 րարմէ . վասն զի ան ծառայութիւններուն
 մէջ որ բարեկամք հասարակարար անձամբ

կը կատարեն, շատ անգամ կը պատահի որ
 շողորորթութիւնը բարեկամութենէն առաջ
 տեսնուի: Իրաւ քիչ մը քիչ դիւրին բան չէ
 թէ որ խօսքը անանկ խորամանկ շողմարա-
 ըի մը վրայ ըլլայ որ բանը վարպետու-
 թեամբ բռնել գիտէ, ու դուն, ինչպէս
 գեղացին ալ, աս անունը ան անարգ հաց-
 կատակներուն չէք տար, որոնք որ սեղան-
 ներ կը մաշէցընեն, միայն կերակուրի ժամա-
 նակ կուգան ու արդէն ներս մանելնուն պէս
 իրենց պարզ խեղկատակութեամբը իրենց
 բնութեան ցածութիւնը յայանի կը ցուցը-
 նեն: Օրինակի համար, շատ մեծ աշխատու-
 թիւներ պէտք էր արդեօք Աղէքոանդր
 Փերեղացիին հացկատակ՝ Մեկանթալին այն
 անարգ շողմարարութիւնը աղացոյցներով
 ցուցընել, որն որ երբ իրեն կը հարցուէր
 թէ Աղէքոանդր ինչպէս սպաննուեցաւ, կը
 պատասխանէր. « Ա՛հ, մէկ գաշտմի մը հա-
 բուածով որ անոր կողը ծակեց ու մինչեւ
 իմ փորս թափանցեց ու Արդեօք դժուար
 բան մ' է ճանչնալ ասանկները որ միշտ հա-
 բուտ սեղաններու բոլորախօք վխտացած կը
 տեսնուին, որոնք որ ոչ սուր և ոչ հուր կըր-
 նան անկէ հեռացընել: Նոյնը կ'ըսեմ այն
 Ախարացի կնիկներուն համար ալ, որ իրենց
 երկիրը « ուրիշի հաճոյքը կատարող ու Աս-
 րեստան անցնելով, հոն ալ « սանդուխթի աս-
 տիճան » կոչուեցան, վասն զի իրենց կռնակը
 թագու հիներու կըծուէին, որ կոխելով դիւ-

բաւ կառքերնին հեծնան : Անանկ է նէ ո՞րն է
 այն շողումարարը, որմէն պէտք կ'ըլլայ զգուշա-
 նալ : Այն է՝ որ իր շողումարար ըլլալը բերնով
 չըսեր . այն է՝ որուն ամենեւին խոհարանին
 բոլորովքը թափառած ատեն կամ արեւու
 ժամացոյցին վրայ կերակուրի ժամը հաշուած
 ատեն՝ մէկէն վրան շհասնուիր . այն է՝ որ ամե-
 նեւին սեղանի վրայ և ոչ մէկ զեղխուածեան
 մը թոյլտուութիւն չտար իր անձին, հապա
 ուտելու և խմելու մէջ շափաւոր ու համեստ,
 ամեն բան տեսնելու ու ամեն խօսք լսելու
 հետաքրքիր երեւալով, եւելօք կը փնտռէ
 քու գործքերուդ խառնուիլ, քու պիտո ներ-
 քին գաղանիքներուդ վերահասու ըլլալ, վեր-
 ջապէս, ան է շողումարար՝ որ իր անձը խեղ-
 կատակի կամ գերատանի նման շցուցնելով
 իր բոլոր վարմանքին մէջը ծանր ու պար-
 կիշտ բնաւորութիւն մը կը սպահէ : Ըստ Պը-
 ղատանի « գերագոյն անիրաւութիւն, արդար
 երեւալ ու զել ու շըլալն է : » Անանկ ալ ամե-
 նէն վասնգաւոր շողաբարթութիւնը, ուրիշի
 կամքը կատարելով ինքզինքը երեւան հանողը
 չ'է՝ հապա ան է որ ինքզինքը ծածկելով,
 ծանրութեամբ դէպ ՚ի իր նպատակը սուսջ
 կը քալէ : Ասիկա է որ ճշմարիտ բարեկա-
 ժութիւնը մեզի կասկածելի կ'ընէ, վասն զի
 անոր կը նմանի, ու առանց մեծ ուշադրու-
 թեան՝ դիւրին կ'ըլլայ իրարու շփոթելը : Գոր-
 բիաս՝ ամուր գրկած ըլլալով Էմբրդ մոգը որ
 փախչելու ատենը մութ սենեակի մը մէջ

ինկեր ու իր ինկած ատենը ան ալ հետը
 քշեր տարեր էր, ու տեսնելով որ Դարեհ՝
 մոգը զարնելու կը վախնար որ չըլլայ թէ
 Գորբիասն ալ մէկտեղ մեռցընէ, սյուաց որ
 աներկիւղ առաջ քալէ, պէտք եղաւ երկու-
 քը մէկէն խոցել⁽³⁾: Բայց մենք որ բնաւ մէկ
 կերպով մ'ալ աս օրինակին « թող կորսուի
 բարեկամը որպէս զի թշնամին ալ կորսուի »
 չենք հաւնիր, կը վախնանք որ շողոքորթը բա-
 րեկամէն զատելու ատեն երկուքին մէջ եղած
 նմանութեան ընթացքէն խաբուելով, չհե-
 աացընենք մէկէն թէ օգտակար բարեկամը
 և թէ վտանգաւոր շողոքորթը, կամ մեր բա-
 րեկամը խնայելու համար, փախչիլ ուղած
 թակարդնուս մէջը շինանք:

Գէշ ցորենին հատը որ մաղի մը մէջ
 աղէկին հետ խառնուած գտնուելով, գրե-
 թէ նոյն անոր ձեւը ու նոյն անոր մեծու-
 թիւնը կ'ունենայ, շատ դժուարութեամբ
 աղէկէն կը տարբերի, շատ փոքրիկ ծակե-
 բուն մէջէն շանցնիր, կամ ցորենին հետ շատ
 մեծ ծակերէ վար կ'իջնայ: Նմանապէս շողո-
 քորթութիւնն ալ որ ամեն բանի մէջ բա-
 րեկամութեան սովորութիւններուն, շարժ-
 մանքներուն, եղանակներուն ու յօժարու-
 թիւններուն կը նմանի, շատ դիւրին չէ բա-
 րեկամութենէն որոշել: Եւ որովհետեւ բա-
 րեկամութենէն աւելի հաճոյական բան մը
 չկայ, և ուրիշ բան անոր պէս հոգիին ամե-
 նէն քաղցր բերկրութեան համը առնել չը

տար, շողքորթը քաղցրութեան հրուդոյրով
 սպառելու կը նայի, ու միմիայն հաճոյանալու
 հնարքին կը զբաղի: Օգտակարութիւնն ու
 հաճոյականութիւնը միշտ բարեկամութեան
 ետեւէն կ'երթան, անոր համար կ'ըսուի թէ
 բարեկամ մը կրակէն ու ջուրէն եւել հար-
 կաւոր է: Առանկ ալ շողքորթը միշտ պար-
 տական ձգելու պատրաստ ըլլալով՝ ճշմարիտ
 բարեկամի մը հետ գործունէութեամբ, մե-
 ծարանքով ու ջանքով կը մաքառի:

Հակամիտութիւններուն ու սովորու-
 թիւններուն նմանութիւնն է որ բարեկա-
 մութիւնը կը ձեւացնէ ու կը հաստատէ:
 Ընդհանրապէս այս մի և նոյն յօժարութիւն
 ներու ու մի և նոյն ատելութիւններու հա-
 մեմատ գալը՝ ասոր թակներու կերպարա-
 նակցութիւն առաջ բերելով, ամենէն եւել
 մտերմական կապը մարդոց մէջ կը հաստատէ:
 Ուրիմն շողքորթը կակուղ մամլի մը պէս թիւ-
 բաթեկութեամբ ամեն տեսակ ձեւ կ'առնէ,
 կամ թէ այսպէս ըտեք, ձեռք բերել ու
 զածներուն վայ կազգարը կը մտնայ, անանկ
 որ կրնայ ըսուիլ:

«Ասիկայ իր տղան չէ, հապա նոյն ինքն Ա.թ.իւ-
 լեան է:»

Ուրիշ կողմանէ ալ իր ամենէն մեծ արուես-
 տակաւ թիւնը այս տեղա է, որ գիտնալով
 թէ անկեղծութիւնը՝ բարեկամութեան բնա-
 ւորութիւնն ու որպէս թէ անոր յստակ լի-
 զուն է, և թէ ասոր հակառակ՝ անկեղծու-

Թեան պահասութիւնը՝ ցած ու անտարբեր սիրտ մը կը ցուցնէ, մեծ ջանք կ'ընէ անկեղծութիւն ձեւացնելու: Բայց ճարտար խոհագործին նման որ խիտ անախորժ համեմունքները չզգացնելու համար, անոնց հետ լիցի արգանակներ կը խառնէ, բարեկամութեան մէջ այնչափ օգտակար եղող ճշմարիտ անկեղծութեան ձայնի եղանակը ձեռք չառնէր բնու. ասոր անկեղծութիւնը միմիայն հաճոյակահուածութեան աչքով պահասութիւնները վեր ՚ի վերոյ կը ատենէ, ու աւելի անոնք կը խտողէ քան թէ ուղղելու կը նայի: Ահա աս է որ շողքորթը ճանչնալը այսքան դժուարին կ'ընէ:

Շողքորթը ան կենդանիներուն պէս է որ իրենց գոյնը կը փոխեն ու կ'առնեն այն մարմիններուն գոյնը որոնց որ կը կպչին: Եւ որովհետեւ իր նպատակը արուեստակամ նմանողութեամբը մեղի խաբէլ է, մեղի կը մնայ անիկա երեւան հանել, նշանակելով տարբերութեան այն կէտերը որ շողքորթը ճշմարիտ բարեկամէն կը զատեն. մեղի կը մնայ, կ'ըսեմ, անիկա իր փոխ առած գոյներէն կուզապտել, որոնց որ ըստ Պղատանի ուրիշ բանի համար շքիմեր, հապա անոր համար որ ան գոյներէն և ոչ մէկն ալ ունի, որ իրեն սեպհական ըլլան: Աւրեմն անդատին սկիզբէն անոր ետեւէն իյնանք:

Բարեկամութիւնը ինչպէս որ կ'ըսեն, սովորաբար յօժարութեանց, ախորժակաց,

տալարու թեանց ու բարուց նմանութեանը վրայ հիմնեալ է, որ մի և նոյն կրթութեանց ու մի և նոյն զբաղմանց հետեւել կու տայ : Ասոր համար է որ կ'ըսուի՝

« Ծերը կը սիրէ տեսնել իր հասակուը ծեր մը, Տղան կը հաճի տղու մը հետ ըլլալ :

Աինը կենսւ մը հետ, շարչարուող հիւանդ մը Ուրիշ հիւանդ մը կը փնտսէ, ու անով կը թեթեւնայ :

Ով որ բազդին դառնութեան ճաշակը կ'առնու,

Թշուառ մարդու մը վրայ իր միտքարու թիւնը կը գանայ » :

Շողոքորթը որ կը տեսնէ թէ բնականապէս մարդս իր նմանները կը փնտսէ, թէ անոնց հետ ըլլալ կ'ուզէ ու անոնք կը սիրէ, նախապէս մէկ յաջողակ մուտք մը, մէկ կապակցութեան դուռ մը կը բանայ, վայրենի կենդանի մը լնտանեցընել ու զոյլի սէս կ'ըսկոսի անիկա շոյշոյէլ, զգուշութեամբ կը քալէ, անոր հետ մի և նոյն սխարժակ, մի և նոյն ուսմանք, մի և նոյն տեսակ կեանք ու նեխալ կը կեղծէ : Կնչուան որ քու վրայէդ աւար մը բնէ, ու դուն վարժուիս անոր շողքորթութեանցը, կը պախարակէ այն անձինքը, այն սովորութիւնները, այն գործքերը որոնց վրայ քու ատելութիւնն ու նեխալը կը ճանչնայ, ու ինչ որ գիտէ թէ քեզի հաճոյ է, ան կը գոյլէ շէ թէ շարիւս սրութեամբ, հապտ բուն խի քեզի մաւրի գմայրած ու

զարմացած եղանակաւ մը : Առաջ կ'ուզէ
քեզի քու սիրածիդ ու քու ստացածիդ վրայ
հաստատ պահել , և քեզի սպացու ցա՛նել թէ
այս խօսքերը իրեն տուն տրուած են բանա-
կանութենէն ու չէ թէ կիրքէն : Բարեմն ի՛նչ
պէս կարելի է ասոր դիմակը վար առնել :
Ի՛նչ ընթացքով կարելի է ճանչնալ թէ այս
նմանութիւնը կեղծ չէ , և թէ երեւալ ու-
ղածին պէս չէ բնաւ :

Նախ և առաջ քննենք թէ իր ախարժակ-
ները իրաւ ջրնէ մերթնեմուն նման են , թէ
տեսողական են , թէ միշտ կը սիրէ ու կ'ըն-
դունի մի և նոյն բանը , թէ իր ճամբան միա-
կերպութեամբ մի և նոյն նպատակը կ'եր-
թայ , ինչպէս որ կը պատշաճի այն պատուա-
ւոր մարդուն , որուն բարեկամութիւնը սո-
վորութեանց և բարուց միաբանութեանը
վրայ հաստատուած է . վասն զի ասանկ է
ճշմարիտ բարեկամ մը :

Իսկ շողորթթր սրովհետեւ իր ընթացքին
բնաւ սրոշ կանան շունի , ու իր անձին հաս-
տատ կենաց ուրուագիծ մը շնած չէ , հա-
յս որուն հետ որ կը կենցաղաւարի անոր
հաճոյիցը համար աս բաները կը փոխէ , բնաւ
ոչ պարզ է , ոչ ալ մէկ , ամեն տեսակ ձեւե-
րու բազկացութիւն մ'է , որ տեղէ տեղ
փոխուած հեղուկի մը պէս լեցուած բոլոր
անօթներուն ձեւը կ'առնէ յաջորդաբար :
Կապիկը ուղեւով մարդուն շարժուածքնե-
րուն ու ցատկատուքներուն նմանութիւնը

ընել, թակարթին մէջը կ'իյնայ: Ըստ քրիստոսի
ասոր հակառակ ուրիշները իր ծուղակը կը
ձգէ, անոնց նմանելով, բայց ամէն մէկը
մէյմէկ տարբեր եղանակաւ: Ոմանց հետ
կ'երգէ ու կը սպարէ, ուրիշներուն հետ
մարմնաց մարդարանի մէջ փորձ կ'ընէ ու փո-
շիով կը ծածկուի: Թէ որ յարեցաւ անանկ
մարդու մը որ մեծ փափոքով սրտորդու թիւն
կը սիրէ, ամէն կողմ անոր ետեւէն կ'երթայ
ու քիչ կը մնայ որ Փետրոսին հետ չաղաղակէ.
« Որչափ կը բաղձայի, նվ աստուածներ, ա-
րագաթախիշ նեւերով զրահաւորուած
» Աշխոյժ սրտի շները քշել երկշտա եղջերու-
ներուն դէմ »:

Բայց ուզածը բնաւ եղջերուն հետեւէն իյ-
նալ չէ, հասցաւ բուն խկ սրտորդին՝ զոր կը
ջանայ իր թակարթին մէջ ձգել: Չիտաւ-
թիւններ ու գիրքեր սիրող երիտասարդի մը
ետեւէն թէ որ ինկաւ, ահա խկոյն գիրքե-
րու մէջ թաղուած կը տեսնես զինքը, կը
թողու որ մօրուքը երկըննայ, իմաստասիրի
վերարկու կը հագնի, իր անձին բոլոր հոգը
կը մուծայ, թիւերէ, ուղիղ անկիւններէ ու
Պղատոնին եւ անկիւններէն զատ ուրիշ բա-
նի վրայ չխօսիր: Թէ որ ծայլ ու ցամակեաց
հարուստի մը քծնել սկսաւ, սրն որ միայն
գինի ու համով կերակուրներ կը սիրէ, խկոյն
« Ոգեւեւս իր աղտոտ ցնցօտիները կը հանէ
կը նեւէ »:

Կը հանէ վերարկուն, կ'ածիլէ մօրուքը՝ ան.

արգասաւոր հունձքի մը պէս, ու միայն
գաւաթներու ու շիշերու վրայով խօսք կը-
նէ, ձեմէլու ատեններ՝ խնդումէն զատ բան
չկայ, իմաստասէրներու դէմ ծաղրաբանու-
թեանէ զատ բան չըներ: Ասանկ կը պատմեն թէ
երբոր Ազատն Արիակուսայ եկաւ, ու Գիսնէ-
սիսս իմաստասիրելու մտեգնութիւն ունեցաւ,
պալատին տախտակամած յատակները ծածկը-
ւեցան այն աւաղովը որ երկրաշափ կտրած
պալատականաց դասերուն կը ծառայէր (4):

Բայց երբոր Ազատն Գիսնէսիսսին առա-
ջին լաւ վարկումը կորսնցուց ու բանաւորը
իմաստասիրութեան մնաս բարեաւ ըսելով
ինքզինքը գիտի, կրիկներու, թեթեւութիւն-
ներու ու ցոխութիւններու տուաւ, բոլոր իր
շողքորթները ու բիշ Արիկէի մը ձեռօք կեր-
պարանոսփոխ եղած ի պէս բոլորովին գիրքերը
մոռցան ու իրենց առջի տղիտութեանը մէջ
ինկան: Ասանկ կը գործեն մըշտ շողքորթներն
ու փառասէրները, որոնց գրութիւններու է Ազ-
կիրիադէսը: Աթէնքի մէջ ծաղրասէր, զը-
ւարթարարաց ու թեթեւէր, և փառասիրու-
թեամբ ու շռայլութեամբ փայլած. Լակե-
դեմոնիայի մէջ լաւ ամիլուած, հասարակ
վերարկու մը հագած ու պաղ ջրով լուացուած,
թրակիիայի մէջ, սեղանի վրայ կամ բա-
նակի մէջ, Տիտափեռնեսի պալատը ինքը զին-
քը փափկութեան, շռայլութեան ու հեշտ-
ախառութեան տուած: այս՝ ամեն ծալքի գա-
լու, ամեն տեսակ սովորութեանց յարմարե-

լու գիւրու թեամբը բարբ Ժողովոցոց սիրաբ
վաստրկեցաւ : Ի՞նչ մեծ տարբերութիւն իր
ընթացքին ու Էպոստոլոսնաասին և Ագեսիզա
յոսին ընթացից մէջտեղը , որմեք իրեն պէս
շատ երկիրներ ու շատ տարբեր ազգեր տե
սան , բայց ամեն տեղ պահեցին իրենց հա
գուտը , իրենց սովորութիւնը , իրենց լե
զուն և իրենց բնաւսրութեան յարմար եղա
նակը : Ասանկ մի և նոյն եղաւ Պղատան՝ Ար
րախուսայի մէջ ալ , Ակադէմիային մէջն ալ ,
Գիանեսիասի պալատն ալ , Գիանին քովն ալ :

Բայց դուն կ'ուզէս արդեօք որ շողքոր
թին պողպատի նման դիւրափոփախութիւնը
ճանչնաս : Դուն ալ փոխու իլ կ'եղծէ , պախա
բակէ՝ ինչ որ առաջ գտկցիր , ախարժակ մը
ցոյց տուր այն բանին որ ուրիշ անգամ քեզի
անհաճոյ երեւցաւ , իսկոյն կը տեսնես շողք
քորթը որ առանց իր անձին վրայ վարկ ու
նենալու , իր սկզբունքներուն տառթիւնը
յայտնելով , կը սիրէ կամ կ'ատէ , կ'ուրա
խանայ կամ կը տրամի . չէ թէ իր յատուկ
զգացողութեանը համեմատ , հազա հայելիի
մը պէս՝ օտար շարժումներ ու կիրքեր ցու
ցընելու համար : Թէ որ իրեն քու բարեկամ
ներեղ մէկին համար արանջես , — « Դուն
անիկա շատ ո՛ւշ ճանչցար պիտի ըսէ , բայց
ինձի ան մարդը բնաւ հաճելի չէ եղած :
Դուն բերանդ փոխէ , ու աղէկ ըսէ ան մար
դուն , « Ո՛հ , պիտի պօռայ , ասիկա սիրուն
մարդ մ'է և քու վստահանալուդ ալ ար

Ժամերս : Յըցուցի՛ր արդեօք անանկ փափաք որ
 գործքերդ ձգես կենաց շատ հանդիսաւ եղա-
 նակ մը վարելու համար : « Ըստ Ժամանակ էր :
 պիտի ըսէ՛, որ կը պարտաւ սրէինք եւ քաշուիլ
 աղատիլ ասանկ աղմկալից զբաղմունքներէ որ
 մեզի նախանձաւ նշաւակ կ'ընեն » : Միտքդ
 դիւր նորէն գործքերուդ ձեռնամուխ ը-
 լալ : « Անտարակոյս անա պիտի ըսէ քեզի
 արժանաւոր առաջարկութիւն մը : Ըստակը ,
 հանդիսաւր անուշ բան է , բայց նուաստա-
 ցուցիչ » : Աս խօսքերը ըսել մը շէ՛ն արդեօք ,
 թէ « Վառն բուն քաւ անձէդ սրշափ տարբեր
 կ'երեւիս ինծի , ուրեմն ես կարօտութիւն
 չունիմ անանկ բարեկամի մը որ իմ բոլոր ըն-
 թացքիս ու բոլոր շարժմունքներուս հետեւիս
 առիկա անանկ մէկ պաշտօն մ'է որ իմ շաքս
 ալ ինծի կը մատուցանէ : Ես անանկ բարե-
 կամ կ'ուզեմ , որ ինծի հետ ճշմարտութիւն
 փնտռէ ու ինծի օգնէ որ անիկա ճանշնամ » :
 Ահա շողքորթին գիմակը վար առնելու առա-
 ջին եղանակ մը : Այն եղանակին մէջը որով
 շողքորթիք մեզի նմանելու կը ջանայ , մէկ ու-
 թիշ տարբերութիւնն ալ այն է , որ ճշմարտ
 բարեկամ մը՝ շնամիտ ու փորձ չընէր այն
 ամեն բանին որ մենք կը գործենք , հասցա
 միայն աղէկ բանի . « ճշմարտ բարեկամ մը
 կ'ուզէ , կ'ըսէ Սոփակը , մասնակից ըլլալ
 մեր սիրոյն , ու չէ թէ մեր ատելութեանը » :
 կը փրնտուէ մեզի հետ ինչ որ աղէկ ու ազնիւ
 է , ու չէ թէ մեզի հետ մեղսակից կ'ըլլայ :

Թէ և ըլլայ ալ՝ գուցէ յաճախ ընտանու-
 Թեամբ մը միայն, և չվարակիր ակամայ մեր
 պակասութիւններովը՝ ինչպէս որ հաղորդու-
 Թեամբ տարափոխիկ ախտ մը կ'ըստացուի :
 Այսպէս Պղատանին աշակերտները սովորու-
 Թիւն ըրին անոր պէս ուսերնին վեր բռնելու :
 Արիստոտէլններն ալ թօթօթելու : Աղեք-
 սանդրի պաշտտականները՝ գլուխնին մէկ կողմ
 մը ծռելու ու ձայներնին հաստը հանելու :
 Որովհետեւ առանց բուն պատճառը գիտնա-
 լու կենակցած մարդոց եղանակն ու սովորու-
 Թիւնները ձեռք առնելէն եւել անարդ բան
 չըլլար : Ասոր հակառակ ինչպէս որ գեան-
 առ իւծը ամեն գոյնը կ'առնէ բաց 'ի ձերմա-
 կէն, շողոքորթն ալ պատուաւոր բաներու
 մէջ մեր օրինակը առնելու անյաջողակ է :
 Բայց չկոյ մոլութիւն՝ սրուն կատարելապէս
 շնամնի : Նոյն և նման այն գէշ պատկերա-
 հանին որուն բնական ձիրքը ամենագեղեցիկ
 նկարներ երեւցընելու բոլորովին տկար ըլլա-
 լով, միմիայն խորշումութիւններու, սպինե-
 րու և ուրիշ տգեղութիւններու մէջ ճիշդ
 նմանութիւն կը ցուցընէ, շողոքորթն ալ մի-
 այն մեր անկորգութիւններուն, աւերորգա-
 սրաշտութիւններուն, մեր բուռն կիրքի բուն,
 գերիններնուս վրոյ վարած խատութիւննե-
 րուն, ընտանեաց ու մերձաւորաց վրայ ու-
 նեցած կասկածներնուս նմանել գիտէ : Իր
 բնական բարբովը բոլոր գէշութիւններուն
 ինքրզինքը յափշտակել տուած ըլլալով :

գէշին կը նմանի , որ մէկը կարող չըլլայ գտնէ
 կասկածելու՝ թէ ինքը այս մեր վրայ եղած
 ներք կ'ուզէ գատապարտել : Արդարեւ անմիջ
 որ մի և նոյն աղէկ բանի վրայ միտքերնին
 հաստատած են , կասկածելի են իրենց բարե-
 կամներէն իբրեւ իրենց պակասութիւնները
 ատող : Ասով էր որ Գիտն ատելի եղաւ Գիտ-
 նէսիտին , Վամիտ՝ Փիլիպպոսին , Աղէտմէ-
 նէս՝ Պտղոմէոսին , և վերջապէս այս ատե-
 լու թիւնը իրենց կորստեանը պատճառ եղաւ :
 Ըողոքորթը որ կ'ուզէ մեզի յար և նման ըլ-
 լալ , և մանաւանդ անանկ երեւիլ , գիտէ մե-
 զի հաճոյանալ ու մեր վստահութիւնը ձեռք
 ձգել , կեղծելով որ իր բարեկամութեան չա-
 փազանցութիւնը բաց 'ի իրեն անծին մեզ
 պախարակելու թոյլ տալու , զինքը ամեն բանի
 մէջ մեզի համակրութիւն ունեցող կ'ընէ :
 Ա'ուզէ պարզապէս գիտուածակոն եղող բա-
 ներու ալ բաժանորդ ըլլալ : Վատառողջ մե-
 կու մը հետ ընտանեկանաբար համար մի և նոյն
 ախտակրութիւնը իր վրայ ալ իմանալ կը
 կեղծէ , օրինակի համար կարճատես ըլլալ
 կամ ծանր լսող : Այսպէս Գիտնէսիտին պա-
 լատակամները , երբոր տեսան անոր աչքե-
 բուն տկարանայր , այնչափ տկար աչք ունե-
 նալ արուեստակցին որ քալելու ատեն ինքը
 զինքնին սեղանին կը դարնէին , ու վրան եղած
 անօթները կը կործանէին (5) : Ուրիշներ ալ
 քու կիրքերդ աւելի ձեռք առնելու համար
 քու վրայ սուս վստահութիւններ կ'ուսնէ .

նան , քեզ կը համոզեն թէ ամենագաղտնի
 բաներու մէջ քու վիճակիդ բաժանորդ կ'ըլ-
 լան : Թէ որ քանգատիս քու կնոջդ ու տղոցդ
 վրայ , թէ որ վէճ ունենաս քու ընկերներուդ
 հետ , իսկոյն առանց անոնց անձին իննայե-
 լու , քեզի կ'ըսեն այն տհաճութիւնները որ
 իրենց տղաքը , կնիկները , տղգտիանները իրենց
 կու տան , ու քեզի կը յայտենն անոնց ամե-
 նագաղտնի պատճառները : Այս նմանողու-
 թիւնը քեզի առաւել ևս իրեն կը յարէ ,
 քեզի վատահացած գաղտնիքները իրեն հա-
 լատարմութեանը պատանդներուն պէս ըլ-
 լալուն , դուն ալ քու կնիկներուդ զինքը մաս-
 նակից կ'ընես , ու անոր վատահալ թեանք պա-
 տասխաններու համար քու հաւատարմութիւնդ
 քիչ քիչ կը հաստատես : Ասանկ շողքորթնե-
 րէն մէկը հաճոյանալու համար անանկ մէկու
 մը որ կնիկը ձգեր էր , իր կնոջմէն թողուե-
 ցաւ , բայց սրախեանէ գաղտու կ'կերթար
 կու գար , երեւան ելաւ իր բարեկամին ձգած
 կնոջը ձեռքովը : Աւտի կարելի է շողքորթին
 յարմարեցընել այն նկարագրութիւնը որ բա-
 նաստեղծ մը խեցգետինին վրայով ըսած է .
 « Ասիկայ անարգ կենդանի մ'է , որ իր ակ-
 ուաներովը կը սողայ ,

Բոլոր իր մարմինը ուրիշ բան չէ , բայց եթէ
 որովայն ,

Աւ իր սուր աչքը ամեն տեղ կը տեսնէ » .
 Ասիկա պատառաբոյծի մը ճշմարիտ գծա-
 գրութիւնն է , այն անարգ բարեկամներէն

մէկուէն որ միայն սեղանի վրայ կը դանուի ,
 ինչպէս որ ըսաւ Եւոյոզիս⁽⁶⁾ : Հողբորդին
 մէկ ուրիշ խորամանկութիւնն ալ այս է , որ
 եթէ մէկ աղէկ սրայխութեան մը նմանելու
 որ ըլլայ , ուրիշներուն կը թողու գերազան-
 ցութիւնը : Բարեկամն'ըը շէն գիտեր ոչ նա-
 խանձ ոչ հակառակութիւն , բաժիննին թէ
 շատ աղէկ բաժնուած ըլլայ թէ քիչ , միօրի-
 նակ դո՛ւն կ'ըլլան : Հողբորթը որ միայն երկ-
 բորդ խողցողի մը սեղ բռնել կ'ուզէ , հա-
 լասարութենէ ալ կը հրաժարի . ինքըղինքը
 ամեն բանէ ստորին կը խոստովանի , բաց 'ի
 չարէն որուն մէջ որ գերազանցութիւն ու-
 նենալ կընայի : Թէ որ քիչ մը սիրտդ կտորած է ,
 ինքն ալ սեւամաղձատ կ'ըլլայ : Թէ որ աւե-
 ըրդ ապաշտ ես , ինքն ալ մօլեռանդ նախան-
 ձաւոր կ'ըլլայ : Վիրահար ես , ինքն ալ սիրոյ
 բոլոր կատաղութիւնները իր վրայ կը ցուցը-
 նէ : Տարածամ գիտուածի վրայ թէ որ խըն-
 դատ , խնդալէն ձաթիլ կընայի : Իսկ աղէկ
 բաներու մէջ բոլորովին ասանց հակառակն է .
 թէպէտ ինքը վաղելու շատ յաջողակ ըլլայ ,
 մրցելու ատեն դուն թռչունի մը արագու-
 թիւն կ'ունենաս անոր քով . ինքը շատ աղէկ
 ձի կըխաղցընէ , բայց քեզիպէս Վենտաւրոսի մը
 բաղդատութեամբ ինքը ի՛նչ կընայ համա-
 բուիլ : Բանաստեղծութեան վրայով քիչ
 բնական հանձար չունիմ , պիտի ըսէ , ու
 բուական լաւ ոտանաւոր կը շինեմ , բայց
 միայն Արամաղդն է որ շանթ կ'արձակէ :

Ասանկով քու ախորժակիդ վրայ գովութիւն
խօտած պիտի երեւայ . կը խոստովանի քու
բնական ձիրքերուդ գերազանցութիւնը ին-
քըզինքը յալթուած ձգելով : Ասանկ են այն
տարբեր խօսքի եղանակները որ շողոքորթը
բարեկամութենէն սրոշել կուտան . նաեւ ա-
նոնց մեղի հետ ունեցած նմանողութեանց
մէջ :

Բայց որովհետեւ բարեկամին ու շողոքոր-
թին հասարակաց է այն բանը , որով երկուքն
ալ ինքըզինքնին հաճելի կ'ընծայեն , (վասն զի
ճշմարիտ բարեկամներն ալ շատ քիչ շէն հա-
ճոյանար բարի մարդուն սրչափ որ շողոքորթ-
ները բարքով ազականեալ մարդուն ,) տեւ
նենք թէ ասոնք աս նոր յարաբերութեամբ
ինչ բանի մէջ կը տարբերին . քանզի նպա-
տակաւնին է որ երկուքն ալ հաճոյանալ ու-
ղելով առաջադրութիւն կ'ընեն : Բացատրենք
այս գաղափարը . անուշ ծիսանելիքներն ու
դեղիժափը երկուքն ալ մէկ հաճոյական հոտ
մը կ'ունենան , այսու տարբերութեամբ որ
մէկը միայն հստատելիքը զմայլեցնելու համար
աղէկ է , փոխանակ զի միւսին վրայ հոտը մի-
այն դիպուածական է , ու իր բնական յատ-
կութիւնն է մաքրել զէջ հիւթերը , տաքցընել
մարմինը և անոր ուժը տեղը բերել : Նկա-
րիչները գոյներու խառնուրդով խիտ հա-
ճոյական նկարներ կը ձեւացընեն : Ասանկ են
բժշկական դեղոց նիւթերն ալ որոնց գոյնը
աչքի աղէկ կ'երեւնայ ու անախորժ բան մը

չունենար : Արդի օք ուր է տարբերութիւնը :
 յայտնապէս իրենց քիչ կամ շատ օգտակա-
 րութեանը մէջն է , որով որ կ'առաջարկուին :
 Ասանկ ալ բարեկամութեան վայելչութիւնը՝
 ծաղիկին գոյն տուող աղուամաղին պէս՝ աղ-
 նիւ ու օգտակար նպատակի մը համար քօղի
 տեղ կը բռնէ . երբեմն ալ կը զուարթացնէ
 սեղանի վրայ եղած հեշտութիւնը , խնդումը
 և անուշ խօսքերը , որանք որ զբաղուած
 ծանր առարկաներուն գրեթէ համեմունքն
 են : Այս էր որ բանաստեղծի մը ըսել տուաւ .
 « Իրենց մէջը թեթեւիկ առաջարկութիւններ
 լով կը զուարճանան » .

Եւ ուրիշ տեղ մ'ալ ,

« Աւրիշ ի՛նչ անմխարանութիւն մեր երկու
 սիրտերը այրայլելով ,

Ասանկ փախուկ բարեկամութեան մը քաղց-
 րութիւնները կրնար վրճովել » :

Շողոքորթի նպատակն է իր գործքերը , իր
 խօսքերը , իր զբօսանքները միմիայն զուար-
 ճութեան գարձինն և կարեկցական օաստիկ
 նրբութիւններով մօզորեցրնելու նայիլ : Աէր-
 շապէս իր ամեն գործած գործքերուն մէջը
 ուրիշ գիտաւորութիւն չունի , բայց եթէ
 ինքըզինքը հաճոյական ցուցնիլ : Բարեկամ մը
 միմիայն իրեն պարտք եղածը գործելով ,
 շատ անգամ հաճելի կըլլայ , երբեմն ալ ան-
 հաճոյ . իրաւ անհաճոյ ըլլալու ետեւէ շըլա-
 լով , բայց նաեւ անհաճոյ ըլլալէ առանց խոր-
 շելու , երբոք անհաճոյ ըլլալը օգտակար հա-

ճարի : Բժիշկ մը ամեն բանէ եւել իր հիւ
ւանդը բժշկելու զբաղելով , առանց մտա-
ծելու թէ այս ինչ բան անոր հաճելի կամ
անհաճոյ կրնայ ըլլալ , երբեմն իր դեղերը
նարդոտով ու քրքու մով կը բաղադրէ , բաղ-
նիքի ու անուշ կերակուրներու հրաման կու
տայ , երբեմն ալ անոր բէշկ մշկոյ , եղբորոս
(կամ բօլիսամ) առնել կու տայ .

« Անանկ բոյսեր որոնց հասը բոլոր զգայա-
բանքնէրը կը զգուեցնէ » .

Նոյնպէս բարեկամ մ'ալ կամ հաճոյական
գովու թխններով մեր սիրտը վեր կը վերցնէ
ու դէպ 'ի բարին կը տանի , ինչպէս Համե-
րոսին մէջը՝

« Քալէ , Քաջդ Տեւկիր , մեր զինուորներուն
պարծանք .

Դէպ 'ի այն կողմը շակէ քու նետերդ » .

Եւ ուրիշ տեղ մ'ալ՝

« Ոհ կրնամ արդեօք վեհանձն Ռդիսեւոր մտ-
նալ » .

Եւ կամ թէ որ պէտք ըլլայ ինքըզինքնիս գիտ-
նալ , բարեկամը մեզի հետ կը խօսի այն վե-
հանձնական աղատու թեամբը ինչպէս որ մեր
պատուոյն հօգը իրեն տաւն տայ . ինչպէս որ
ըսու Ագամի մանն .

« Ոզ աստուածայինդ Մենեղաւոս , ի՞նչ ան-
խոհեմ եռանդ .

Քեզի աս կէտէն մոլորեցուց » :

Երբեմն նաեւ գործք ալ կը խառնէ խօսքե-
բուն հետ : Այսպէս Մենեղէմն իր գուռը

20 11 11

գոյելով ու Ասկղէ պիտոյ էտին տղին վերկուել-
 լը զլանալով, զինքը ետ քաշեց այն անկար-
 գութեանն սրուն մէջ կ'ապրէր, ու իր սպար-
 տաւորութեանը մէջ մտցուց: Նմանապէս
 Արկեօիդայոս ալ արգիլեց Բաթոսին որ իր
 զպրօցը շիննէ, քանզի կատակերգութեան
 մը մէջ Աղէանթոսի դէմ երգիծաբանական
 ստանաւորներ շինեց էր, ու նորէն ընդունեց
 երբօր անիկա իր սխալմունքը շակեց ու
 իր զղջմամբը Աղէանթոսին սիրտը աւառ և
 թէ որ մէկը բարեկամ մը վշտացընէ, պէտք
 է գիտնայ ճամբան թէ ի՞նչպէս կրնայ անոր
 օգտակար ըլլալ առանց բարեկամութեան
 կապը խզելու, յանդիմանութիւնը պէտք է
 այն դեղին պէս ըլլայ սրուն առողջարար
 դառնութիւնը հիւանդին բժշկութիւն կու-
 տայ: Նայն և նման այն երաժշտին որ յարմար
 ասե՛ն ձայնին եղանակը կը փոխէ, ճշմարիտ
 բարեկամն ալ փոփոխակի քաղցրութիւն ու
 խստութիւն գործածելով, մեղի օգտակարին
 ու պատուաւորին դարձնելու համար շատ
 անգամ մեղի հաճելի կ'ըլլայ ու միշտ մեղի
 կը ծառայէ: Բայց շողքորթը որ ամենեւին
 մի և նոյն բռնած ձայնին եղանակը չփոխե-
 լով ամեն բանի մէջ մեղի հաճոյանալ կ'ու-
 ղէ, չգիտէ ոչ դէմ կենալ և ոչ դէմ խօսիլ:
 Բոլոր մեր բաղձանացը գերի ըլլալով, մեղի
 հետ միշտ ներդաշնակեալ կ'ըլլայ: Քսենոփոն
 կ'ըսէ թէ Ագեսիդայոս սրտի մտօք կ'ընդու-
 նէր ան մարդոց գովութիւնները որոնք պէտք

եղած ատենը գիտէին զինքը կշտամբել ալ :
 Նմանապէս մենք ալ կրնանք հաւատալ բա-
 րեկամի մը քաղցր ու հաճոյական խօսքերուն
 որ գիտնայ հարկ եղած ատենը մեզի դէմ
 կենալ ու անհաճոյ ըլլալ : Բայց կախ թու-
 զունք այն մարդուն բարեկամութիւնը որ մի
 միայն մեր յօժարութիւնները ու զուարճու-
 թիւնները փայտայելու կը ջանայ, ամենեւին
 մեզի յանդիմանելու արիւթիւնը չունենա-
 լով : Յիշե՛ք միշտ Լակեդեմոնացիի մը այն
 գեղեցիկ խօսքը որ ըսաւ, երբոր իր առջին
 Քարիլոս Թագաւորը կը գովէին. « Այդ
 մարդը ի՞նչպէս աղէկ կրնայ ըլլալ որ շարե-
 բուն դէմ խիտ չէ » : Գոռեիոր ցուբերուն
 ականջացը կը փակչի, շանաճանճն ալ
 շներու : Ասանկ ալ շողոքորթը փառատէրնե-
 բուն ականջները գովութեամբ խաղեցնե-
 լով, անանկ ամուր մը անանց կը փակչի որ-
 մէն շին կրնար աղասիլ : Ահա աս սեղ
 մարդս մաքուր ու լուսաւորեալ գատողու-
 թեան մը կարօտ կ'ըլլայ որ որոշէ թէ շողո-
 քորթին գովածը մեր գործքերն են, եթէ
 մեր անձը : Ար ճանչցուի թէ մեր գործքե-
 րը կը գովէ, երբոր ետեւնուս մեզի աղէկ
 ըսէ՝ քան թէ երեսնուս ՚ի վեր, թէ որ իր
 գովութիւններուն վրայ հաստատ կենալով՝ չէ
 թէ միայն մեզի գովէ, հասցա բոլոր ան մար-
 գիկը որ մերինին պէս գործքեր կը գործեն,
 թէ որ երբեմն մէկ եղանակաւ և երբեմն ու-
 բիշ եղանակաւ չխօսի և չշարժի, և որ

ան աւելի որոշիչն է թէ որ մենք ալ ամեն մը
 շիմանաւնք ու շիրջանք ան բաներուն վրայ
 որոնց համար որ մեզի կը գովէ, ու թէ որ
 մենք չուզենք ընել կամ ըսել բոլորովին ա-
 նոնց հակառակը: Ասան զի մենք մեր խղճ-
 մտանքին մէջ անշարժարեւի վկայ մը ու-
 նինք, որ շողորթութեամբ խանգարուելու
 անյարմար ըլլալով, կը բողբէ սուտ գովու-
 թեանց դէմ ու զանոնք ետ կը նետէ: Բայց
 չբարեմ թէ ինչպէս շատ մը մարդիկ ու-
 թոյք գծբաղդու թեանց մէջ միտթարանքնե-
 թու ահանջ կը գոցեն, ու որովհետեւ մտիկ
 կ'ընեն անոնց որ իրենց հետ կը մշտանան,
 սխալմունքի մը կամ մտորութեան մը մէջ
 ինտալու ստեղծին՝ մէկ դատախազի մը ու
 թշնամիի մը պէս կը նային ան մարդուն որ իր
 ազդարարութիւններով իրենց մէկ վերկարար
 զղում մը ազդեցնել կը ջանայ, մինչդեռ ի-
 րենք բարեօրութեան և բարեկամութեան
 նշանի մը տեղ կը դնեն շողորթներուն ի-
 րենց ընծայքին հաւնելը: ✕

Շողորթ մը որ թէ ծանր և զուարճալի
 մէկ գործքի մը կամ մէկ առանձին խօսքի մը
 համար արուեստակութեամբ մեզի կը գովէ,
 միմիայն այս ժամանակ որ դիպուածին համար
 կը վնասէ: Բայց ան մարդը սրուն գովու-
 թիւններն ու շողորթութիւնները մեր ըն-
 թացքին վրայ, մեր ապրելու եղանակին վրայ
 բեռ մը կ'ըլլան, կը նմանի այն գերիներուն
 որ ցուրտն կը գողանան շէ թէ երբոր դեռ հաւ-

կին մէջն է հունձքէն ետեւ, հապա սերմի հա-
 մար զատուածին մէջէն: Եղբորթը մեր
 հոգիին տրամադրութիւնը կ'առնէ, ու մե-
 լութեան՝ առաքինութիւնի անուն տարով,
 կը վաստակարացրնէ մեր սովորութիւնները որ
 մեր գործքերուն սերմն են, մեր կենսոցը կա-
 նանը ու աղբիւրն են: « Պատերազմներու ու
 ռապտատմութիւններու առեւն, կ'ըսէ Թ. Թ.
 յիստորիէս, մարդիկ իրենց անտուակութիւն-
 ոները արդարացնելու համար բաւերուն հա-
 ռասրակ նշանակութիւնը կը փոխեն: Յան-
 ռգուզն համարձակութիւնը՝ աղնուական ա-
 ռիութիւն կ'անուանեն, խելացի յապա-
 ռու մը՝ կեղծ երկիւղ մը, համեօտութիւնը՝
 ռճարտալ ցածութիւն մը, Է միշտ խահեմ
 ռըջահայեցութիւնը՝ ընդհանուր անհաղու-
 ռութիւն: Նմանապէս մարդո շտեաներ ար-
 գեօք շողքորթներն ալ որ շուշուրթիւնը
 աղնուականութիւն կը կոչեն, ազահութիւ-
 նը՝ ինայողութիւն, զուարճութեանց ասե-
 բասան ախորժակը՝ գթածութիւն Է զիւ-
 բաղգածութիւն, բարկութիւնն ու կրից յա-
 վրշտակութիւնը՝ արիութիւն Է մեծանձ-
 նութիւն, սրտի ցածութիւնը՝ բաղքարա-
 բոյութիւն ու մարդկութիւն: « Տարտածու-
 ները, Պղատանին ըսածին տէս, սիրած բա-
 ներնին միշտ շափաղանց կը դառնան: Տարտակ-
 քթին համար, կ'ըսեն թէ հաճոյական բան
 է, արձառնելին համար՝ թագաւորական է,
 թուխ դէմքին համար՝ թէ սյրական է, սպի-

տակին համար՝ թէ Աստուծոյ դաւակ է ,
 չկոյ բան , ինչուան դեղնութեան համար
 ալ , որ անիկա մեղքի հետ բաղդատելով , հա-
 ճոյական անունի մը տակ շք կերպարանափո-
 խեն ։ ։ Ո՛վ որ ինքըզինքը համոզելու թող
 կուտայ թէ գեղեցիկ է՝ երբոր ագեղ է , ու
 մեծ՝ երբոր պղտիկ է , շք կրնար երկար ատեն
 գիտնալ բաւական թեթեւ ու դիւրին
 բժշկուելիք մոլորութենէ մը խաբուած ըլլալը ։
 Բայց ի՞նչ սոսկալի հետեւանք կ'ունենայ հա-
 սարակօրէն տնանկ գովութիւն մը որ մեզի
 մեր մոլութիւնները առաքինութեան պէս
 նկատելուն և առ բանին համար տրամելուն
 տեղը , ինքըզինքնուս հաւնելու վարժեցնե-
 լով , կը վերցընէ դէշ բանէն այն ամօթը , որ
 բնականապէս անկէ առաջ գալ պէտք էր ։ Չէ՞
 որ սասնկ մէկ գովութիւն մը պատճառ ե-
 դաւ Սիրակուսացւոց կործանմանը , Դիոնի-
 սիոսին ու Փաղարիսին անգթութիւնները՝
 արդարութիւն և շարտեցութիւն անուա-
 նելով ։ Ո՛վ կորսնցուց Եգիպտոսը՝ Աստուծոյ
 պատիւ ու սէր կոչելով (6) Պաղամէսոսին ամօ-
 թալի տկարութիւնները , այո՛ինքն սնապաշ-
 տութիւնը , կայր նախանձաւորութիւնը ու
 զեղխութիւնները ։ Ո՛վ աղտկանեց գրեթէ
 Հռովմայեցւոց բարքը , բաղդի և իշխանու-
 թեան առատաձեռն ու խիստ ազնուական
 սովորութեանցը տեղը անցընել ցալով Ան-
 տանինասին հեշտասէր շապլութիւնը , այո՛ինքե-
 անառակութիւններն ու անսահման զեղխու-

Թիւնները : Ի՞նչ պատճառ խրախուսեց
 Պաղտմէասը որ հասարակաց առջին երաժշտի
 մը բոլոր հագուստովը նուագարան զարնէ :
 Ո՞վ ցուցուց Ներսէսը գիմակով ու առջի գե.
 բասաններուն կօշիկովը Թատրի մէջ : Չէ՞ որ
 շողոքորթութիւնը : Այս չէր որ իրենց գերա-
 ւանց բարձրութենէն, գահալիժեց աս բոլոր
 բարքերնին իանգարամ Թագաւորները, ա-
 նոնց կարծել տալով թէ երգելու ատեննին՝
 Ապողոնն են, գինովցած ատեննին՝ Բաքոսը,
 ու մարմնոյ մարդերու մէջ Հերքիւլէսը : Ու-
 րեմն նոյն իսկ այն ատեն երբոր շողոքորթը
 մեղի կը գտվէ, պէտք է որ իրմէն կասկած չիւնայ :
 Ասիկա ինքն ալ գիտէ ու կասկածներուն ա-
 ուաջքը առնելու վարպետ ըլլալով, շատ ան-
 գամ տկարամիտ կամ անպիտան մարդոց հետ
 էր շողոքորթութիւնները կը գործածէ, ինչ-
 պէս այն կատակերգութեան մէջ, ուր որ
 Ստրութիաս կը թշնամանէ Բիասին տխրա-
 բութիւնը, ու կ'ըսէ անոր, զինքը ծագած անակ-
 ընելով, « Դուն Աղէքսանդրէն աւելի խմեր
 ես » . ու իսկոյն խնդալով Ախիլոսոց կը
 դառնայ (?) : Բայց թէ որ այս կերպ վէճէն
 ճշդիւ զգուշացող մարդոց հետ գործը խ-
 նայ, անոնց ուղղակի գովութիւն ընծայելուն
 տեղը, զարտուղի ճամբայ մը կը բռնէ, ու
 նորէն անզգալի կերպով անոնց կը մօտենայ,
 կրամակար կենդանիի մը նման որն որ մարդս
 կ'ուզէ ընտանեցնել : Երբեմն ատենաբաննե-
 րուն օրինակին պէս օտար լեզու մը փոխ

կ'առնէ, մէջ կը բերէ անանկ գովութիւն
 մը որ քեզի համար լսած է, քեզի կը պատմէ
 թէ, ի՞նչ ծայրագոյն զուարճութեամբ գըտ-
 նուեր է այն տեղը, օտարականներու, պա-
 տուաւոր քաղաքացիներու հետ որոնք քու
 արդեանցդ վրայ զարմանալով լջուած, քեզի
 համար շատ աղէկ բաներ կ'ըսէին: Երբեմն
 ալ կեղծելով թէ քու վրայովդ թեթեւիկ
 չարախօսութիւն մը լսած ըլլալով, որն որ
 խտրապէս ինքն ըրած է, վտ. թաջան եղանա-
 կաւ մը կը վազէ, քեզի կը հարցնէ թէ ո՞ր
 ատեն և ո՞ւր տեղ այդ կերպ բան մը խօսել
 կամ գործել կրցեր էս, ու իր յուսացած
 մէկ բացառութենէն ետեւ, ատկից առիթ
 կ'առնէ քեզի շփեմն եււ. գովելու: « Իրաւ-
 ցընէ շատ հիացեր էի, կ'ըսէ, որ դուն քու
 բարեկամներէդ մէկին համար գէշ զուրջած
 ըլլաս, դուն որ երբէք քու թշնամեացդ
 անգամ գէշ չես ըսեր, կամ թէ դուն ու-
 թիշին բարիքը քեզի սեպհականած ըլլաս,
 դուն որ քու կիկիդ ալ առատածեռն էս ու:

Ուրիշ շողքորթներ նմանելով այն նկար-
 շին որ լուսոյ ներգործութիւնները աղէկ
 հոգացուած շուքերէն դուրս հանել կու-
 տան, կը գովեն ու կը տածեն մտութիւն-
 ները, հակառակ առաքինութիւնները պա-
 խարակելով, անոնք չարախօսելով, անոնց
 մէջ ծաղր խառնելով: Անառակ, ազահ և
 չար մարդոց հետ խօսելով, որոնք որ խիստ
 անիրաւ ճամբաներով հարստացած են, ի,

մատուցիւնը՝ տխմարութիւն, արդարութիւնն ու բարեխառնութիւնը՝ ամեն բանի անյաջող սրտի ցածութիւն մ'է կ'ըսեն: Այն անհոգներուն մէջտեղը սրտնք որ գործէ կը փախչին, չեն ամշնար հասարակաստութեան մատակարարութիւնը դժուարին ու անպտուղ ջանք մը ու փառաց փափաքը՝ ընդունայն ու անարգատաւ որ ամբարտաւանութիւն մը անուանելու: Ատենաբանի մը շողոքութեամբ թիւն ընելու համար, անարգ կը համարին խնամատարութիւնը, տարիածու կը նիկնեցու հետ իյնալու ելլելու համար, կ'ըսեն թէ ասոնք խելացի են, ու յարած այն էրիկմարդուն համար ալ, թէ վայրենի ու անողամ սիրտ ունին:

Բայց շողոքութիւն կեղծաւորութեանը կատարեալ աստիճանը այն է որ իր անձին ալ չինայեր ու այն ըմբիշին նման որ իր աստեանը պառկըցընելու համար, վար կը ծռի, շողոքութեամբ ալ իր յատուկ պակասութիւնները պակասրակելով, վարպետութեամբ կ'անցնի քու գովութիւններուդ: Տալու վրայ քեզի կ'ըսէ, «ես յեաին գերիներէն աւելի երկշտ եմ, չեմ կրնար համբերել ամենափոքր յոգնութեան մը, ամենաթեթեւ փաստ մը զիս կատաղութեան աստիճանը կը հասցընէ»: Բայց դուն ամեն դժուարութեանց ու վտանգաց գեր ի վերոյ հանդիսանալով, միշտ քաղցր, միշտ հանգարտ ես, բան մ'ալ քեզի չվրդովեր, բան մ'ալ քեզի չյաղչ

մատուցիւնը՝ տիմարու թիւն , արդարու
 թիւնն ու բարեխառնութիւնը՝ ամեն բանի
 անյաջող սրտի ցածութիւն մ'է կ'ըսեն : Այն
 անհագնէրուն մէջտեղը որոնք որ դարձէ կը
 փախչին , չեն ամշնար հասարակապետու
 թեան մատակարարութիւնը դժուարին ու
 անպտուղ ջանք մը ու փառաց փափաքը՝
 ընդունայն ու անարգատաւսր ամբարտաւա
 նութիւն մը անուանելու : Ատենաբանի մը շո
 ղոքորթութիւն ընելու համար , անարգ կը հա
 մարին իմաստասիրութիւնը , սարսիածու կը
 նիկնէրու հետ իյնալու ելլելու համար , կ'ը
 սեն թէ ասոնք խեղացի են , ու յարած այն
 էրիկմարդուն համար ալ , թէ վայրենի ու
 անողամ սիրտ ունին :

Բայց շողոքորթին կէզձաւորութեանը կա
 տարեալ աստիճանը այն է որ իր անձին ալ
 չինայեր ու այն ըմբիշին նման որ իր ակայ
 եանը պառկըցնելու համար , վար կը ծռի ,
 շողոքորթն ալ իր յատուկ պակասութիւննե
 րը պակասակելով , վարպետութեամբ կ'անց
 նի քու գովութիւններուդ : Տովու վրայ
 քեզի կ'ըսէ , « ես յեաին գերիներէն աւելի
 երկչտ եմ , չեմ կրնար համբերել ամենա
 փոքր յոգնութեան մը , ամենաթեթեւ
 մը ղիս կատաղութեան աստիճանը կը հաս
 ցնէ : Բայց դուն ամեն դժուարութեանց ու
 փտանգաց դեր 'ի վերայ հանդիսանալով , միշտ
 քաղցր , միշտ հանգարտ ես , բան մ'ալ
 քեզի չվրդովեր , բան մ'ալ քեզի չյաղչ

անձին վասյ բնու թող կուտային, սվ ճար
 պիկ շողոքորթութիւն, շէ թէ խօսքով, հա
 սրա գործքով. ու ասով իրեն կը վկայէին
 անոր յաջողակութեանը վրայ իրենց վստահ
 ըլլալը: Որչափ փոփոխական են բաղդին խա
 դերը, ըսած է Եւրիպիդէս (8): Բաց աս
 ծածուկ գովութիւնը երևան հանելու համար
 որ շատ վարսէա շղահայեցութիւն կը սրա
 հանչէ, պէտք է շողոքորթին անվայելուչ
 խրատներու դիւրութիւններ ասլ գիտամար
 ու իրեն ծիծաղական խորհուրդներ առաջար
 կել: Քանզի բնաւ դէմ չպիտի խօսի, հասրա
 պիտի հ...ձի, հնազանդութեամբ պիտի ընդու
 նի, ամեն մէկ խօսքին պիտի աղաղակէ, « Ըստ
 տ աղէկ ըսիր, աս խօսքը սքանչելի է », դուն
 ալ դիւրաւ պիտի հասկնաս, « Ի՞նչ բան մը
 կուզէ, և ուրիշ բան կը փնտսէ » այսինքն քեզի
 գովել և քու տեսչնասիրութիւնդ գգուել:

Արտեն թէ նկարը համը բանաստեղծու
 թիւն մ'է, շողոքորթութիւնն ալ իր լեզուն
 համը ունի: Ինչպէս որ սրտուդ մը սրտալու
 կենդանին դիւրաւ կը խարէ, երբ որ սրտն
 աւելի իր ճամբան երթալ կամ հօտ մը սրտ
 սրտնէ կամ երկիր վարել մը կը ձեռացնէ,
 ասանկ ալ շողոքորթը իր գովութիւններովը
 սրիշ եղանակաւ այնչափ ու ժով մը մեղի
 չմտանար, քան թէ երբ որ կը կեզծէ թէ
 մեղի չգովիր: Օրինակի համար ան մարդը
 որ հարուստի մը՝ ծերակոյտի մէջը կամ ժողո
 վըրդեան ժողովը գալը տեսնելով իր նասա

բանք անոր կուտայ, կամ նշմարելով որ կ'ու-
զէ խօսիլ, ինքք խկոյն իր խօսքը կը կարէ, և
ու բեմէն վար կ'իջնայ խօսելու կարգը և
նոր թողելու համար, իր լաեկալը քան թէ
բոլոր խօսքերովը ալ աւելի ազէկ կը յայանելը
արդէօք այն բարձր գաղափարը որ հարուստ
տին խոհեմաւեանը ու յաջողակութեանը
վրայ ունի: Նաև շողոքորթները թատրոններ-
բու եւ հասարակութեան ժողովներու մէջ կը
տեսնենք, որ աւաջին աթուր կը գրաւեն, չէ
թէ ուզելով որ իրենց պահեն, հասցա որ հա-
բուսաներուն հաճոյանան աւաջին աթուր
անոնց հրամայելով: Կորհուրդներու եւ առ-
եաններու մէջ կը ջանայ խօսքը ազէկ ըմբռ-
նել, ու թէ որ հարուստ մը կամ կարողու-
թեան տէր մարդ մը իր կարծիքին հակա-
ռակը ընէ, շուտով մը իրենք կը ձգէ որ ան-
որ բռնի ընդունի: Աւտի պէտք է որոշել
այո արուեստակեալ զիջումներուն ճշմարիտ
վահմանք որոնք շողոքորթները մեզի կը հա-
մաձայնեցնեն, չէ թէ հմտութեան, առ աքի-
նութեան կամ հասակի համար, հասցա հա-
բուսութեան ու յազգի համար:

Միգարսս օր մը Մպեղէսին առջև գ'ազ-
բութեանց ու ստաւերներու վրայ խօսիլ ու-
զելով, նկարիչը անոր խօսքը ընդմիջեց ու
ըսաւ. «Կը տեսնես սա ազաքը որ իմ ներ-
կերս կը լսեն: Քանի որ ըսու կեցեր էիր,
ու շաղբութեամբ քեզի կը դիտէին ու քա-
ձանդակին հագուստներուդ վրայ կը զարմա-

նային, բայց քանի որ սկսար քու չգիտցած
 բաներուդ վրայ խօսիլ, քու վրագ կը իրն-
 գան: Արաստ կը հարցնէր Սողոմին թէ իր
 մէն աւելի երջանիկ ինչ մարդիկ տեսած է:
 Իմաստասէրը անոր ըսաւ, Բիսանը, Աղէ սպիտը
 ու Տէլոս անուն Աթէնքի նուաստ քաղա-
 քացի մը: Հողբորթները ընդ հակառակն թա-
 քաւորաց, մեծամեծաց և հարուստներուն
 բողբը ու երջանկու թիւնը բարձրացնելու
 միայն գահ չըլլալով, զանանք մարդոց մնացորդ
 մասէն շատ վեր կը դնեն, իրենց խահեմու-
 թեանը՝ յաջողակութեանը և ամեն տեսակ
 առաքինութեանը համար: Ալ ասկէ ետե-
 ծագը ընելու է Սոսիկեանները, որ կ'ըսեն
 թէ իրենց իմաստունը՝ գեղեցիկ, արնուական
 ու թագաւոր է: Բայց շողբորթները ալ հե-
 ոուն չ'են երթար արդեօք, անանք որ հա-
 յուստ մարդէն երբոր ուղեն՝ բանաստեղծ
 մը, նկարիչ մը, երաժիշտ մը կը շինեն, և
 անոր ուժը կամ արագութիւնը երեւցնելու
 համար, դիտմամբ կը թողուն որ գօտեմարտի
 մէջ իրենք յաղթուին, կամ վաղելու տուն
 անանք առաջ անցնին, ինչպէս որ Հիմմերացի
 Արիստոն՝ որ մը Աղէքսանդրին ըբաւ ու ան
 ալ անոր բրածը հասկնալով, շատ դժկամա-
 կութեամբ իրեն իմացուց:

Կարնիագէս կ'ըսէ թէ թագաւորներուն
 ու հարուստներուն ազոցը մէկ հատիկ աղէկ
 սորված բանը ձի հեծնալն է: Դպրատուն-
 ներուն մէջը վարժագետները իրենց գոյու-

Թիւններովը զանոնք կը շողոքորթեն , ախոյ-
 եաններն ալ գիտմամբ անոնց կը թողուն
 յազթու թիւնը : Բայց ձին որ ամենեկին ու
 բոշում ընել չգիտէ , ու քիչ կը շիտթի թէ
 որ իր վրան հեծնէ թէ մեծ մարդ մը թէ
 հասարակ մարդ մը , թէ հարուստ մը կամ
 աղքատ մը , առանց ակնածութեան վար կը
 ձգէ զինքը կառավարել չգիտցող որ և իցէ
 հեծնողը : Այսպէս անիրաւեցաւ Բէնն ըսե-
 լով թէ՝ « Եթէ կրնայի , իմ գովութիւններովս
 մէկ անգատտան մը արգասաւ որ ընել , շիտակը
 գանիկա գովելովս կ'ընէի , քան թէ հերկելու
 համար աշխատանք քաշելով » , ուրեմն իրա-
 ւունք կ'ունենար գովելու անանկ մէկ մարդ
 մը , որուն իր երախտագէտ ըլլալը գիտէր
 թէ անպատու չպիտի ըլլար իրեն , Բայց
 կրնանք պատասխանել թէ անգատտան մը ի-
 րեն գովութիւններովը վտանգի մէջ չիցնար ,
 սակայն սուտ գովութիւնները՝ մանաւանդ
 թէ որ գովածը արժանաւոր ալ չըլլայ , կը
 կուրացնեն ու կը հորսնցընեն ան մարդը որուն
 որ գովութիւն կ'ընծայուի : Բայց այսքանը
 բաւական ըլլայ սա նպատակիս : Անցնինք ա-
 զատարեքանութեան :

Երբ որ Պատրիկը Ա. քիլէօսին զէնքերը վրան
 առաւ ու իր նժոյգները կռիւի կը տանէր ,
 չհամարձակեցաւ Պիղէոսին նիզակին դարչելու :
 Ասանկ ալ պէտք է որ շողոքորթը ինքզինքը
 բարեկամութեան կերպարանքով ծածկելու
 ատենը գտնէ ազատարեքանութիւնը մէկ դէ

Թողու, հրաժարի անոր դպչելու, զօրաւոր
 հզօր՝ և ահագին ու բարեկամութեան յայ-
 տարար զէնքի պէս: Բայց սրովհետեւ իր խա-
 զերովը, իր ծաղրերովը, իր խեղկատակու-
 թիւններովն ու անառակութիւններովը ա-
 տելի ըլլալու վախէն, երբեմն մէկ անաչառ-
 իրատ մը արուեստակելու, և իր շողորթ-
 թութիւններուն հետ կարծիքներ ու յանդի-
 մանութիւններ խառնելու կը համարձակի,
 ուրիշ մէնք ալ իր բնաւորութեանը այս նոր
 ընթացքը քննէնք:

Մենանդր իր տեսարաններուն մէկին մէջը
 սուտ Հէրքիւլէս մը կը հանէ թատրոնին
 վրան, որն որ կը կրէ չէ թէ մէկ զօրաւոր
 լախտ մը, հապա մէջը ծակ ու թեթեւ գա-
 ւազան մը: Ատրելի չէ՞ նաև ըտել որ եթէ շո-
 ղորթթիին ազատաբերանութիւնը փորձուելու
 ըլլայ, պիտի գանուի թոյլ, առանց ծան-
 րութեան և առանց զօրութեան: Նոյն և
 նման այն կանանց երեսի բարձերուն որ ա-
 նանց զլուխը վեր բռնած երեւալով, կը ծալ-
 լուին ու խկոյն կը փոսնան, առ սուտ ա-
 զատաբերանութիւնն ալ որ միմիայն հաս-
 տատութեան երեսի մը ունի, չուսենար
 ու չբարձրանար ուրիշ բանի համար, բայց
 միայն որ ցածնալու ատենը իր հետը քաշե-
 ան մարդը որ անոր ազատաբերանութեանը
 հաւատարմութեամբ կը փտահի: Ճշմարիտ
 ազատաբերանութիւնը, որ բարեկամութիւնը
 ճշգիւ կը նկարագրէ, մեր պակասութիւնն

ներք ուղղելու ետևէ կ'ըլլայ, ու այն առող-
 ջարար ցաւը որ կը պատճառէ, մեղքին ներ-
 գործութեանը կը նմանի որ թէպէտ և ա-
 նոյ՛ Վերաւորուած մարմինները կը խայթէ :
 Մենք աւելի մասնաւոր կերպով մը պիտի խօ-
 սինք ասոր վրայ : Եղոթորթը առաջ յանդգ-
 նաբար ճշգուծիւն մը ու անընկճելի խառու-
 թիւն մը կ'արուեստակէ, խիստ է անոնց որ
 կը ծառայեն, եռանդնատ է իր ընտանեացն
 ու մերձաւորացը պակաս թիւնները յանդի-
 մանելու համար, գռուղ և արհամարհոտ,
 շարձող և շղարմացող է և ոչ բանի մը, մէ-
 կու մը շնորհք շնորհ և անիրաւ դատախա-
 զութիւններով քեզի բարկացնելու նայող է,
 որ մոլութեան թշնամի մարդու պատիւ ստա-
 նայ, ու հաճոյք կատարելով բան մ'ընելու
 կամ գործելու անցարմար ըլլալով, չկրնար
 յանդիմանելէ ետ կենալ, վերջն ալ աս նոյն
 մարդը որ շնչին բաները ասանկ եռանդուն
 կերպով մը կը մեծցնէ, շատ մեծ յանցանք-
 ները շտեմնող կ'երեւայ : Թէ որ կարասիք մը
 տեսնէ լաւ շտեղաւորուած, սուր մը աղէկ
 շտեղաւորուած, գլուխ զարդարելու կամ զգեստ
 հագնելու կերպին անհոգութիւն մը, կամ
 աղէկ շղարմանուած ձիեր կամ շներ, անոնց
 վրայ կը յայտնէ իր սուտ հոգածութիւնը :
 Բայց արհամարհեալ ընտանիք, երեսէ ձրգ-
 ւած զաւակներ, անարժան կերպով բռնուած
 ամուսին մը, անարգուած աղգականներ,
 ցրուած հայրենի ժառանգութիւններ, իր

վրայ ամենևն ին ներգործութիւն մը շէն ընելը
 առ չափազանցութիւններուն անդգայ ըլլալով,
 բերանը բանալու անգամ չհամարձակիր:
 Այն մարմնամարդ վարպետին պէս է, որ
 ըմբիշները գինիի ու հեշտութեանց մէջ
 թուլնալու թող տալով, ամաններու ու ջրն
 ջոցներու համար շատ մեծ հոգածութիւն
 կը պահանջէ, կամ ան վարժապետին պէս որ
 տղաքը սաստիկ կը յանդիմանէ գրածին աւ-
 բելու ու նորէն գրելու յարմար զանազան
 տախտակներու վրայ ըրած անհոգութիւններ-
 նուն համար, ու լեզուին կանոններուն գէմ-
 ըրած ամենամեծ սխալնին աչքին շերեւար:
 Իբրևցնէ ասանկ է շողքորթը: Ծաղրա-
 կան խօսքի մը մէջ անոր խորին իմաստը չէ
 դատեր, միայն խօսողին ձայնը սրտաբախելու
 ետեւէ կ'ըլլայ, կը յանդիմանէ թէ սառով
 պարզած բան խմելով ձայնը աւրեր է: Թէ
 մէկը իրեն անձուռնի գրուածք մը կարգալ-
 տայ, անիկայ քննելու տեղք, տհաճութիւն
 մը կը ցուցնէ թէ թուղթը շատ հաստ է,
 կամ օրինակողին տառասխալները մեծ բան
 մը կը ցուցնէ: Այսպէս Պողոտէսի պալա-
 տականները անոր գրագիտութեան ախոր-
 ժակը տեսնելով, գիշերին մէկ մեծ մատը
 անոր գրուածքներուն ոճերուն յտակաւ
 թեանը, ոտանաւորներուն չափակցութեանը
 կամ պատմական գործքերուն վրայ վիճելով
 կ'անցընէին, բայց անանցմէ և ոչ մէկը շէր
 համարձակէր իր անգթութիւնը, ամբարտա-

ւանու թիւնք, զէղխու թիւններն ու գաղանի
 գործքերը երեսը տալու: Այն անցաջողակ
 վերաբուժներուն նման որ ուռայցնէր ու խո-
 ցեր բժշկելու համար, հիւանդին խղունգ-
 ներն ու մազերը կտրել կուտան, շողոքորթ-
 ներն ալ միայն ան ատեն կը գործածեն աղա-
 տաբերանու թիւնք, երբոր արամեցնելու կամ
 անհամոյանալու քնաւ վախ չունենան:

Ուրիշներ՝ որ շողոքորթութեան մէջ աւել-
 լի ճարտար են, առ աղատու թիւնք աւելի
 փախուկ կերպով շողոքորթելու համար՝ յան-
 դիմանելու կը գործածեն: Օրինակի համար,
 Արգոցի Աղիօք տեսնելով որ Աղէքսանդր
 մէկ խեղկատակի մը մեծագին պարզեւնել-
 քուաւ, նախանձէ ու սրամտութենէ շար-
 ժած պօռայ, ի՞նչ անխելքութիւն: Ու եր-
 բոր Աղէքսանդր բարկութեամբ հարցուց ի-
 րեն թէ ի՞նչ կ'ուզես ըսել այս խօսքով, « կը
 խոստովանիմ քաւ թէ չեմ կրնար առանց
 ցասման տեսնել որ դուն բոլորովին Արա-
 մաղդին զուակն ես, շողոքորթներն ու խեղ-
 կատակներ սիրես: Հերքիւլէս կը դժօնուր
 կիրկոսներու հետ, Բաքոս՝ այժամարդնե-
 րու հետ, դուն ալ այս տեսակ մարդիկը մեծ
 քան մը կը համարիս (՞) »:

Ար մը երբ Տիգերիսա ծերակոյտին ատ-
 եանը կը մոնէր, իր շողոքորթներէն մէկը
 ոտքի վրայ ելաւ ու յանդգնաբար ըսաւ թէ
 սրալհետեւ իրենք աղատ մարդիկ են, աղա-
 տաբերան խօսել կը պարտաւորին, ու քնաւ

ոչ կը լռեն, ոչ ալ շտեմնելու կը զարնեն ինչ
 որ կրնայ Տէրութեան վիճակին օգտակար
 ըլլալ: Առանկ խօսքի մը սկզբնաւորութիւն
 քուր ծերակոյտին ու նաև Տիւրքիոսին ալ
 ուշադրութիւնը գրաւեց և ամեն ալ լռե-
 ցուց: Մտիկ ըրէ, կայսր, շարունակեց շո-
 զղոքութիւն, « ինչ բանի վրայ որ բոլոր աշխարհք
 քեզի կը յանդիմանէ, ու մէկն ալ չհամար-
 ձակի՛ր քեզի բացարձակ խօսելու: Կուն բռ-
 շտրովին քու անձիդ առողջութեանը վրայ
 անհոգ կը կեննամ, դուն քեզ մեր օգտին
 հակելու համար գիշեր ցերեկ կը մնշեցընես »:
 Ու ասոր նման շատ խօսքեր ալ ըրաւ, անանկ
 որ կաստիոս Սեւերոս ձարտառանք շկրցաւ
 փեքզինքը բռնել ու զտաւ, « իրաւցնէ սա մար-
 գը իր ազատագրեանն թեամբը պիտի կոր-
 սաւի »:

Այս կերպ շոջղոքութեան թիւնները, շի-
 տակը, քիչ ձանձրացուցիչ են, բայց կան
 շոջղոքութեան թիւններ որ շատ վտանգաւոր ըլ-
 լարով մտիկ ընող անխոհմտներուն կորստեանը
 պատճառ կ'ըլլան: Օրինակի համար, այն տե-
 րակ շոջղոքութեան թիւններ որ զանխոհմտ-
 ները մեղադրելի կ'ընեն իրենց անեցած մա-
 ջութիւններուն հակառակ ուրիշ մալութիւն-
 ներու համար, ինչպէս այն շիմմերոցին որ
 Աթենացի խիտտ ագահ և խիտտ ժլատ հա-
 բուստին յանդիմանութիւն կուտար լքման
 ու շոջղութեան մը համար որն որ թէ զինքը
 թէ զուկրները կորսնցընել պիտի մտար, նաև

անանք վասն գաւոր են որ շուայլնէրը ու վասն
 նալնէրը մէկ մ. ծ խնայողութիւն մը կ'ընէ
 ըսելով կը մեզագրեն, ինչպէս որ Տիաստ Պ. Ե. Ե.
 րանխա՝ Ներսէսին կ'ընէր. վերջապէս անանք
 վասնգաւոր են, որ կատաղի և անգութ
 իշխաննէրը կը յարգուրեն որ շափազանց աղէ-
 կութեան մը, ատելի և փնտասկար գթութե-
 թեան մը քիչ ականջ կախեն: Աւրիշնէր
 պարզ ու շափաւոր մարդոց հետ գործ ունե-
 նալով, անոր խորամանկութենէն վախնալ
 և անոր նենգութեանը դէմ անձերնուն զգու-
 շանալ կը կեղծեն: Թէ որ ինկած էլ ամ մար-
 դէրնին անանկ նախանձատ մ'ըլլայ որ միայն
 պախարակել ու չարախօսել սիրելով երբեմն
 բանագատուած ըլլայ հաշակաւոր մարդ մը
 գովելու, շողքորթը անոր կը հակառա-
 կի, ու անոր որպէս թէ ան մարդուն ամենա-
 մեծ պակասութիւննէրէն մէկը գովելու աս
 զիջումը կը յանդիմանէ: «Ահա կը տեսնեմ,
 կ'ըսէ, թէ դուն ինչպէս ապարդիւն մարդիկը
 գովելու շուայլութիւն կ'ընես: Ատ մարդուն
 բնական ձիրքը ինչ է: Այդչափ նշանաւոր
 ինչ խօսք խօսած է կամ ինչ գործ գործած
 է»: Բայց շողքորթը մանաւանդ կը նայի որ
 սիրահարեալնէրու սրտին մէջք տիրապետող
 կերքը գրգռէ: Թէ որ անանք եղբոր մը հետ
 անմիաբան, ընտանեաց հետ պաղ, ամուսնոյ
 մը հետ երկպառակ տեսնէ, առանց անանք
 իրարու հետ աղէկ չվարուելնուն համար յան-
 զիմանելու, իրենց գծկամակութիւնը աւելի

կրկնապատկելու կ'աշխատի : « Դու՛ն ինքզինքդ
 անանց յարգել տալ շոթաւն , կ'րո՛ւն , յան-
 ցանքը քուկդ է : Քու թուլութեանդ և ու-
 բիշի հաճոյանալու բարբիդ միայն գանգաւ
 քրէ ո : Բայց թէ որ ապօրինաւոր կիրքի մը
 գէ՛մ բա կու թեան կամ նախանձու յօժա-
 րութիւն մ'ըլլայ , ան առե՛ն շողոքորթը արի-
 ու թիւն կը ցուցնէ ու արդէն շատ սաստկա-
 ցած կրակը արծարծելով , կ'արդարացրնէ
 կինը ու տարփաւորը կամբատաանէ ասիւրախ-
 տութեանը ու խտաութեանը համար .

« Ապերախա , առանկ փափուկ կրակնեբու
 ինչպէ՛ս գէ՛մ կը կենաս ո :

Այսպէ՛ս երբոր Անանիոս Ագիպտոսի
 թագուհոյն համար կերէր կը մրկէր , իր բա-
 րեկամները ղինքը կը յանդիմանէին թէ թա-
 գուհւոյն իր զրայ ունեցած շափաղանց կիրքին
 արհամարհանօք ու սրախ խտութեամբ հա-
 տուցումն կ'ընէ : « Անիկա անանկ գեղեցիկ
 թագաւորութիւն մը ձգեց , ամենաքաղցր
 կեանքէ մը հրաժարեցաւ , ու ինքզինքը մա-
 շեցուց բանակի մը մէջ քու եակէդ գալով ,
 ի՛նչու համար , միմիայն հաճի անարգ պատ-
 ուանուներ կրելու համար , ու գուն արհամար-
 հելով իր արամութիւնները , անոր գորովն ա-
 նիրաւ պաղութեամբ մը հատուցում կ'ընէս ո :
 բայց սակայն ինքը այս անիրաւ յանդիմա-
 նութիւններովն աւելի շողոքորթութեւ լով , քան
 թէ ամենազեղեցիկ գովութիւններով , ուրիշ
 բան չէր զգար , բայց եթէ ղինքը ուղղել

ուզող երեւալով իր գէշնալուն գլուխ եւ
լելլ :

Ասանկ մէկ ազատաբերանութիւն մը
կրնայ բազդատուիլ այն կնիկներուն բուռն
կրիցը հետ , որոնք տեսակ մը սրտի ցաւու
վրայ խօսք բացող 'երեւալով , ցանկութեան
հեշտութիւնը կը գրգռեն ու կը բորբոքեն :
Գինին որ ըստ ինքեան դեղթափ մ'է մուլ-
խինդի դէմ , երբոր այս թոյնին հետ խառ-
նուի , ասոր ներգործութիւնը ալ աւելի զօ-
րաւոր կ'ընէ , քանզի գինին տաքութիւնը
ասիկայ աւելի շուտով սրտին կը հասցնէ :
Չըսեմ հոս տեղ ան պատասխանը որ Բիաս
տուաւ , երբոր իրեն հարցուցին թէ կենդան-
եաց մէջը ո՞րն աւելի ահագին է : « Վայրի
կենդանեաց մէջ , ըսաւ , բռնաւորը , իսկ ըն-
տանիներուն մէջը շողոքորթը » : Ալ աւելի
ճշմարիտ կ'ըլլար եթէ ըսէր թէ ընտանի
շողոքորթներ կան , որ միայն մեր սեղանին
մասնակից ըլլալ կուզեն , բայց ուրիշներ որ
իրենց հետաքրքրութիւնը , իրենց նենգաւո-
րութիւնը , իրենց անիրաւութիւնները տանը
ամենէն գաղտուկ տեղերը տանելով , ու պո-
ղիպոտի պէս իրենց թեւերը ամեն կողմ տա-
րածելով , անանկ կատաղի ու վայրենի գա-
զաններ են , զորոնք և ոչ մէկ բան մը կրնայ
ընտանացնել : Թէ որ ասոնցմէ զգուշանալու
բան մը կայ նէ , անտարակոյս այն աղէկ մտած-
մունքն է թէ մեր հոգին երկու գործարան
ունի իր մէջը , իմացականութիւնը որ ճշմար-

տութեան, բանակիանութեան և առաքրտութեան ամսուն է, և երկնաութիւնը որ մալորութեանց և կրից կայանքն է: Տեստի մէկ ճշմարիտ բարեկամ մը խելացի բժիշկի մը պէս որ միտքը կը դնէ հիւանդը նայել ու առողջութիւնը տեղը բերել, կուզէ ու կը կողդուրէ այս երկու կարողութեանց ամենէն աղէկը, մինչդեռ շողքորթը ցանկութեան կողմը ձեռք առնելով, կը զուարճացնէ, կը գրգռէ, ու ան հեշտութեանց հրապոյրովը որ կը ջանայ անոր ցուցնել, բանականութեան իշխանութենէն փախչուելու կը յորդորէ ցանկութիւնը: Այն կերակուրներ որ առանց արեան հաւաքումը եւելցնելու, կամ շիշոյ և ջրաց զօրութիւն տալու, արեան խառվութիւնը կը գրգռեն, ախորժակը կը բանան, և մարմինը թոյլ ու գունաթափ կ'ընեն: Ասանկ ալ շողքորթը մեր վրայ իմաստութիւն ու բանականութիւն զօրացնելու անկարող ըլլալով, ուրիշ բան չգիտէ, բայց էթէ վտանգաւոր կիրքի մը օգնել, անբանական բարկութիւն մը բորբոքեցնել, նախանձ գրգռել, անտանելի ամբարտաւանութիւն մը սնուցանել, իր տրտունջներովը ցաւ պատճառել, և անիրաւութիւններովը ու ցաւալի յառաջածանօթութիւններովը արդէն շարութեան ու տկարամտութեան և թերահաւատութեան ծայրը հասած հոգի մը կասկածներով, խռովութիւններով և դառնութեամբ լեցնել: Ահա

ասոնք են այն նկարագիրները որոնցմով ուշադրութիւն ընող միայք մը կրնայ դիւրաւ շողքորթի ճանչնալ : Ա՛ստեցնէ , թէ որ ասանկ ըսել արժանէ , մեր կրից առաջին բողբոջները , որոչէս զի կրակը արծարծէ , վտանգաւոր խոցերը սնուցանէ ու թողու որ մեր հողւոյն այս արատաւոր մասերը ապականին : Թէ որ բարկացած ես « Պատժէ » պիտի ըսէք զի : Թէ որ բանի մը կը ցանկաս , « վայելէ » : Թէ որ վախ մը ունիս « Փախչիմք » : Թէ որ կա կածներ ունիս , « Հաւատա » :

Գուցէ դիւրին չէ շողքորթի յանդատրաստից բռնել այն առիթներուն մէջը , ուր որ կրից բռնութիւնն ու մեծութիւնը մեզի բանակահատ թեան ձայնին խուլ կ'ընեն , բայց որովհետեւ ինքը միշտ միւս նայնէ , շատ ուրիշ բաներու մէջ դիւրաւ պիտի բռնուի . օրինակի համար թէ որ ստամբսիդ լեցուն ըլլալը զգալով , բաղնիք մանելու կամ սեղան նստելու միայք ունիս , բարեկամ եղող մարդ մը շթողուր ու կը յորդորէ որ անձիդ խնայես : Բայց շողքորթի ինքն քեզի դէպ 'ի բաղնիք կը քաշկուտէ , քու ախարժակդ գրեգռելու համար առջեւդ քանի մը նոր կերակուրներ բերել կուտայ , ու քեզի կը խրատէ որ կերակուրէ զգուշանալով անձդ չնիհարուցրնես . ու ցամաքէն կամ ծովով ճամբորդութիւն մ'ընելու , գործի մը ձեռք զարնելու վարանելդ որ տեսնէ , քեզի կ'ըսէ , « արտարալու բան չկայ , կրնայ ըլլալ որ ալ աղէկ

ժամանակի մը ձգուի, կամ ուրիշ մէկուն յանձնուի, առ գործը ու թէ որ քու բարեկամներէդ մէկուն ստակ փոխ տալ կամ պարգեւել խոստացած ըլլաս, ու ասոր համար պարտաւորութիւն մը վրայ առած ըլլալուդ սիրայ նեղանայ ու խօսքէդ ետ մնալուդ համար ամէնաս, շողոքորթը կը ոյն մէկը դէպ 'ի գէշ կողմը ծռեցնելով՝ զանալու խորհրդին մէջը քեզի պիտի հաստատէ, ու քեզի ետ կեցնող ամօթը վրայէդ պիտի վունտէ, և քու առջիդ պիտի գնէ թէ ըրած մեծ ծախքերդ ու ամենուն ստակ հոգալու պէտքդ կը պարտաւորեն որ խնայողութիւն ձեռք առնես: Այս ուրեմն գոնէ անոր մեր կիրքերը, մեր տկարութիւնները և մեր մտլութիւնները մեզմէ անգամ ծածուկ պահելովը, անհնարին է շողոքորթին դիմակը վար շանուիլը, քանզի մենք անիկա միշտ պիտի տեսնենք մեր կիրքերուն ջատագով, մեզի ետ կեցնող սահմանները ցաթկել անցնելու քաջալերող: Բայց ահա այս նիւթին վրայով այսքանը բաւական է, անցնինք մեծարանքներուն ու ծառայութիւններուն:

Այս տեղն է որ շողոքորթը միշտ պատրաստ ըլլալով մեզ պարտաւորելու որ զինքը սրդարացնող վկայութիւն չբերենք, շատ դժուար է ճշմարիտ բարեկամէն որոշել: Եւրիպիդէս կ'ըսէ թէ « բարեկամի մը բռնած ճամբաները պարզ և յստակ ըլլալու են առանց ծպտելու ու ճշմարտութեան բուն լեզ-

ա ին տէր , բայց շողորթ թինները « իրենց
 շարութիւնը ծածկելու համար մեծ կարօ-
 տութիւն ունին արհեստի » , մանաւանդ թէ
 խիստ չգտնուած արհեստի : Բարեկամ մը որ
 ծամբան քեզի կը սլատահի , ելլեմն քեզի
 քան մը շոտած կամ քու ըսածիդ անգանչ շք
 կախած կ'անցնի կ'երթայ , մէկ նայուածքով
 կամ մէկ հաճոյական ինդուլով մը փոխադարձ
 բարեսէր կամաց վկայութիւն մը տալով կամ ըն-
 դունե լով ինքզինքը գոհ կը համարի : Շողորթ-
 թը շտապու մը կը վազէ ետեւէդ կու գայ , հե-
 ուուանց ձեռքը քեզի կ'երկնցընէ , թէ որ դուն
 իրմէ առաջ առ բանը ըսես , քեզի չտեսած
 քլալուն վրայով ինքզինքը արդարացնելու հա-
 մար բողբոքներ ու երգումներ կը գործածէ :
 Վհանապէս բարեկամ մը՝ գործերու մէջ շատ
 անգամ անասրբեր քաները զանց կ'ընէ , իր
 բռնած ծամբանէ մէջ տղայական ճշդութիւն
 մը չմտցնէր , ու ամեն տեսակ ծառայու-
 թիւններու համար մէջ շնետու իր : Շողորթ-
 թը միշտ փութալան , միշտ սախող , միշտ
 չհողնող , քեզի ծառայելու համար ուրիշ
 ժէկու մը ոչ ժամանակ կը թողու և ոչ ալ
 տեղ , կ'ուզէ ամեն քան ինքը ժայն իր վրան
 առնել , ու թէ որ չըլլայ , սիրտը շատ կը վի-
 րաւորի : կամ մանաւանդ կը տրտմի , կը յու-
 ոահատի : Այս բոլոր ընթացքներուն մէջը
 խելքը գլուխը եղող մարդ մը կը ճանչնայ չէ
 թէ ճշմարիտ ու անկեղծ բարեկամութիւն
 մը , հասցա շահախնդ իրի մը առ երեսու եղած

մեծ ջանքը, որ իր ծառայութիւնները խոյ-
տառակ կ'ընէ :

Քննէ նախ այն տարբեր եղանակը որով
շողոքորթն ու բարեկամ մը խօսամուսնքներ
կ'ընեն : Հաս ժամանակէ ՚ի վեր կ'ըսուի .
թէ բարեկամ մը երբոր բանի մը համար խօսք
կուտայ, կը ջանայ ըսել .

“ Սրաի մտք, թէ որ կրնամ, թէ որ
կարելի է ” :

Հողոքորթը կ'ըսէ առանց խահեմութեան .

“ Խօսէ, ինչ կուզես ” :

Կատակերգակ բանաստեղծներն ալ անոնց
բերանը կը դնեն այս լեզուն .

“ Նիկամագու, հրաման ըրէ, որ այս կար-
ձեցեալ քաջին

Երթամ երկու խօսք ըսեմ, երդում կ'ընեմ
որ իսկոյն

Անկա ձեռնոցէ մը աւելի դիւրաթեք ու
չաա կակուղ կ'ընեմ ” :

Երկրորդ՝ բարեկամ մը և ոչ մէկ գործոյ
մը մէջ մեղի հեա կը միաբանի, թէ որ գոնէ
առաջուց խորհրդակցելով չչափէ ու չփորձէ
այն պարտաւորութեան կամ օգնութեան
պատճառը, որ մեղիան գործը ընելու սրօշէլ
տուեր են : Բայց շողոքորթը թէ և իրեն թոյլ
տուութիւն ըլլայ այն պատճառները քննե-
լու և անոնց վրայով իր կարծիքը տալու,
ուրիշ բանի շնայիր, բայց միայն մեղի հա-
ճոյանալու, ու վախնալով որ բաղձացուած
քանին պաղ կերպով յօժարելու կամ մեր-

ժերու կստիած շքեւի իր վրան, ինկոյն մեր
 գրաւսքու թեանցը կը համաձայնի ու իր
 խրատներովն մեր յօժարութիւնները կը գըր-
 գուէ: Վասն զի քիչ թագաւորներ կամ հա-
 բուսաներ կան որ ըսին.

« Թէ որ կարող ըլլամ գանել նաև թշուա-
 ւութեան մէջ

Անանկ բարեկամ մը որ անկեղծ սիրով մը
 յորգորուած,

Առանց վախի, բայց սրտով, ինձի ճշմար-
 տութիւնը զուրցէ »:

Ասոնք ամենը կ'ուզեն, թատեր մէջի դերասան-
 ներուն պէս բարեկամներու խումբ մը ունե-
 նալ որ իրենց հետ համաձայն ըլլան, կամ
 հանդիսականներ որ իրենց գովութիւն տան,
 Մեքայէ տղերգու թեան մը մէջ շատ աղէկ
 տուած է աս իմաստուն խրատը

« Դուն քեզի բարեկամ ընտրէ այն մեծա-
 պատիւ մարդիկը,

Որ ամենեւին քու մտլութիւններդ փայփայել
 չեն նայիր.

Բայց վըրընտէ քու պալատէդ բոլորովին
 չնչին ու թուրանդ շողքսրթը,

Որ քեզի հաճոյանալ ուզելով խունկ կը
 ծխէ քու մտացածին խորհուրդներուդ »:

Իշխանները բոլորովին ասոր հակառակը կ'ը-
 նեն: Անոնք որ կը համարձակին իրենց դէմ
 կենալ և հակառակ ըտել, իրենցմէ կը հե-
 աացնեն, և այն ապիրատ մարդոցը, այն ա-
 նարգ խաբէբայներուն որ շողքսրթութեամբ

հաճոյանալու ճամբան գիտեն, իրենց պաշտօնին դուռը կը բանան, ու անո՛ց կը հաւատան թողոր իրենց գարձքերը, ինչուան նաև իրենց ամենապաղտնի կիրքերը: Այս շողոթորթներուն մէջէն ամենէն պարզամիտները որ ինքըզինքնին միայն ծառայելու արժանի կը կարծեն, իրենց կարծիքը առ շին ու զերթէ որ անոնց խորհուրդ հարցնող ըլլայ: Աւրիշ աւելի խորամանկ շողոթորթ մը խորհուրդ հարցնելու ատեն ուշադրութեամբ մտիկ կ'ընեն, շատ անգամ ճակատը կ'իծիռներ կը ցուցնէ, թողոր ըսուածներուն բուն խորունկը մտած կ'երեւայ, ու բառ մ'անգամ բերնէն չհաներ: Երբոր խորհուրդ հարցնողը իր մտքը անոր աղէկ մը հասկցնէ: « Ա՛յ՛ Վստուած, կը պօռայ, դուն ինձ մէ առաջ ըսիր, ես ալ նոյն խորհուրդը պիտի ըսէի: » Չափաբերները կ'ըսեն թէ մակերեւոյթներն ու գիծերը աննիւթական և պարզապէս դիւրիմաց ըլլալով՝ չեն կրնար ծռիլ, տարածուիլ, ոչ ալ ինքնիրեննուն շարժիլ, հասցա միայն կը ծռին այն մարմնոց ձեւերուն ու շարժմունքներուն նման, զորոնք որ կը շրջապատեն: Նոյնը ըսելու է շողոթորթներուն համար ալ, ուրիշ կերպ չեն խօսիր, չեն խորհիր, չեն դատեր ու չեն կերպարաներ, հասցա միայն ուրիշէն համաձայն: Այս ամեն հանգամանքներուն համար դժուար է արդարև շողոթորթը բարեկամէ մը սրռել, մանաւանդ անոր մատուցած ծառայութեանը եղանակին նայելով:

Ճշմարիտ բարեկամ մը ուրիշ կերպով
աւելի սրտանց բարիք մը շքներ հապա միայն
գաղտուկ, պարծանքէ ու փառքէ կը փախչի,
ու այն բժիշկին նման որ շատ անգամ գաղտ-
նի դեղով մը կը բժշկէ, մեզի ամենամեծ
ծառայութիւններ կ'ընէ առանց մեր գիտ-
նալուն թէ ո՞ր ձեռքէն ելած է այն բարիքը:
Ասանկ էր Արգեօսի զայտոսին բնաւորութիւնը:
Շատ կերպ գործքերուն մէջէն նշանաւոր է
սա ըրածը. որ մը Քիոս կղզեցի Ապեղէսը
հիւանդ պառկած և ամեն բանէ զուրկ գրա-
նուելով, իսկոյն զանիկա տեսնել եկաւ, ստիկի
գումար մը հետ առած, ու անոր անկողինին
մօտ նստելով, ըսաւ. « Հաս ուրիշ բան չեմ
տեսներ, հապա միայն էմբիտակղին շորս տա-
րեքքները, կրակ, հող, ջուր և պարզ ու
թեթեւ օդ, ու դուն ալ աղէկ շես պառ-
կած »:

Ու այն միջոցին բարձր շտկելով՝ ստիկին
քսակը տակը դրաւ առանց մէկը տեսնելու:
Ապեղէսին ծառայող կիներ այն ստակը գրա-
նելով՝ բոլորովին զարմացած ցուցուց տիրոջը:
Ապեղէս խնդալով ըսաւ. « ատիկա Արգեղա-
յոսին մէկ իրազն է ո՞ր Աստ իմաստասիրու-
թեան տղայք իրենց հօրը կը նմանին: Այս
խօսքը գոնէ Լակիտոս անուն Արգեղայոսին
մէկ աշկերտին վրայ կ'ապացուցուի: Օր մը
ատիկա ուրիշ բարեկամներու հետ, կեփիտակ-
բատին դատաստանը մտիկ ընելու նստած էր,
որն որ տէրու թեան դէմ յանցանքի մը համար

կ'ամբաստանուէր : Ամբաստանողը ուզէց որ
 Աբիխակրատ իր մասնին ցուցնէ ասով միայն
 յայտնի կ'ըլլար իր յանցանքը : Յանցաւորը
 մասնին գետինը գլխից , Լակիտոս անիկա
 տեսնելուն պէս ստորը վրան դրաւ ու շահէց :
 Աբիխակրատ արդարանալով , իր դատաւոր
 ներէն շնորհակալ եղաւ , բայց անսնցմէ մէկը
 որ եղած անցածը տեսեր էր , իրեն ըսաւ որ
 բարեկամին շնորհակալ ըլլայ , ու իրեն պատ
 մեց այն վեհանճնական գործքը , որ Լակիտոս
 գաղտուկ ըրեր էր : Ասանկ կը հաւատամ թէ
 աստուածներն ալ սրնց բնութիւնն է բա
 րերարութիւններու ատեն միմիայն բարերա
 րութիւն ընելու զուարճութիւնը ունենալ ,
 մարդոց բարիք կ'ընեն առանց անսնց գիտու
 թեանը : Բայց շողոքսթը իր ընթացքին մէջը
 արդար , ճշմարիտ , սրբազ ու ազնիւ բան մ'ալ
 չունի , միշտ շունչը կտրած , միշտ քրտինքի
 թաթխուած , կը տատանի , կը պօռայ , խել
 քէ գուրս հոգւով մը իր ծառայութիւնները
 յարգի ընել տալ կ'ուզէ , ինչպէս որ տգեղ
 նկարուած պատիերի մէջ մարդս բռնի եղած
 գոյներով , կնճիսներով , խորշամտութիւն
 ներով և շատ խիտ գիծերով առարկան շատ
 զարմացուցիչ եղած կը կարծէ : Երբեմն տաղա
 կալի հանգամանքներով ըրած ընթացքները ,
 տուած աշխատանքները , ան բանին համար
 իր վրան բերած ատելութիւնները , այն նե
 ղութիւնները ու խոչընդոտները սրնց համ
 բերեր է , կը սքամէ , անանկ որ մարդս

բունի կը գրգռուի իրեն ըսել. « Այդ բանը
 սղջափ աշխատանքի շաժեր » վասն զի երեսի
 զարնու ամ բարեբարու թիւն մը բոլոր իր մըցա-
 նակը կը կորսնցնէ ու անտանելի կ'ըլլայ : Աս-
 նաւանդ որ շողքորթին բրածնեբը նոյն իսկ
 բրած վայրկեանին մեր երեսը գորնելու և
 մեզ ամչնելու կերպ մը ունին : Ասոր հակա-
 ոակ բարեկամ մը իր բրածը ըսելու բունա-
 գատուած ատենն : անգամ, բանը պարզապէս
 կը պատմէ, ամենեւին իր անձին վրայ չխօ-
 սելով : Սպարտացիք սաստիկ սովի մը ատեն
 ջմիւռնիացիներուն ցորեն խրկեցին, և որով
 հետեւ անոնք այս առատաձեռնու թեանը
 վրայով իրենց զարմանքը կը յայանէին, Սպար-
 տացիք պատասխան տուին թէ խելքէ գուրս
 բան մ'ըբած չեն, և թէ այն ցորենը թողի-
 լու համար պարզապէս հրովարտակով մը հրա-
 ման բրած էին որ մարդիկ ու անասուններ
 մէկ որ միայն ցորեկը բան չուտեն : Ծառա-
 յութիւն ընելու այս աղնուական կերպը
 բարեբարութիւն ընողներուն այնչափ շատ
 հաճելի բան է, որ իրենց կարծել կուտայ
 թէ ան բարիքը ընելու համար իրենց շատ
 քիչի կը նստի :

Ասոնցմէ զատ չէ թէ միայն շողքորթին
 բրած ծառայութիւններուն անտանելի պար-
 ծանքէն և այն թէթեւամտութենէն որով
 որ այն ծառայութիւնները կ'ընէ՝ շողքոր-
 թը կրնայ ճանչցուիլ, հատկաւ ալ աւելի կը
 ճանչցուի քննելով թէ այն ծառայութիւն-

ներք աղնիւ էն թէ չէ, և թէ օգտակարու
 թիւնը և գուարժուածիւնը իրենց նպատակ
 ունին: Ճշմարիտ չէ, թէպէտ և Գորգիաս
 ալ բռնէ, « թէ ճշմարիտ բարեկամ մը, բարե-
 կամներուն արդար եղածէն զատ բան չպա-
 հանջելով՝ անոր ծառայութիւն պիտի ընէ
 նաև շատ անիրաւ բաներու մէջ ալ ու վասն զի
 բարեկամ մը շատ աղէկ կ'ուզէ մեր առա-
 քինութիւններուն օգնել, բայց ոչ թէ մեր
 մտութիւններուն, մեզի ետ կը կեցընէ նաև
 բոլոր ան բաներէն որ վայելուչ եղածին հա-
 կառակն են, ու թէ որ չկրնայ մեզի համ-
 դէլ, Փսիկնին՝ Անտիպատրոսին ըսած աս գե-
 դեցիկ խօսքը մեր գէմը կը դնէ՝ « Դուն չես
 կրնար զիս միանգամայն շողքորթ ու բարե-
 կամ ունենալ ու այսինքն թշնամի և միանգա-
 մայն բարեկամ: Իրաւ պէտք է բարեկամին
 օգնել անոր գործքերուն մէջ, բայց չէ թէ
 անոր յանցանքներուն մէջն ալ: Պէտք է օգ-
 նել իր առաջադրութիւններուն, բայց չէ
 թէ գէշ եղածներուն, պէտք է զած ատենը
 վկայութիւն տալ, բայց չէ թէ անոր համար
 ուռտ երգում ընել, անոր՝ դժբաղդու թիւն-
 ներուն ցաւակից ըլլալ, և ոչ թէ անիրաւու-
 թիւններուն, ու թէ որ բարեկամ մը իր բա-
 րեկամին գործած գէշ բանը գիանալ անգամ
 չուզեր, ալ աւելի իրաւամբ պէտքը չէ որ
 մասնակից ըլլայ անոր սխալանացը և ամօ-
 թոյն: Սպարտացիք Անտիպատրոսէն յաղ-
 թուելով, ու անոր հետ հաշտութեան վրայ

խօսելով, շատ խիտտ սրայմաններ սիրով ըն-
դունելինն առ աջարկեցին անոր, միայն թէ
երբ որ պատուոյ հակառակ բան մը շքան :
Ասանկ է ճշմարիտ բարեկամը : Թէ որ պէտք
ըլլայ քեզի բարեբարութիւնն ընել, քեզի հա-
մար ծախք ընել, քեզի նեղութեանն ու վտան-
դի ատենն քաջաւերել, կ'ուզէ առաջին կան-
շուած մարդը ինքը ըլլալ, ու ամենն ին անձը
արդարացնելու պատճառ մը շքուցնելով՝ ա-
մեն բանի պատրաստ է : Թէ որ իրմէն պա-
հանջուածն անվայել բան է, կ'ազտէ որ ինքը
ան բանին մասնակից ըլլալէն ազատ թողուի :
Ասոր հակառակ շողքորթը դժուար ու վը-
տանգաւոր ծառայութիւններու մէջ միշտ
մէկ պատրուակ մը կը գտնէ հեռու կենալու,
մէկ ճաթած աման մ'է որ եթէ զարնելու
ըլլաս, գէշ ձայն կը հանէ : Բայց թէ որ ցած
ու անպատիւ ծառայութիւններու վրայով
խօսք մը բացուի, կրնաս ամեն բանի յան-
դըպնիլ անոր հետ, առանց ան գործը շա-
րաչար գործելէն վախնալու, բան մ'ալ իրեն
աչքին դժուար ու նախատական չերեւար :
Ար անսնես կապիկը, չգիտէ ոչ շան նման
տունն սրահպանել, ոչ ձիու պէս բեռ կրել,
ոչ եղի նման երկիր վարել, բայց կատակի ու
թշնամանքի կը դիմանայ և ամեն մարդու
ղբօտանքին յարմար կու գայ : Ասանկ ալ շո-
ղքորթը բարեկամներուն իր հանձարովը, իր
քսակովը կամ իր անձամբը օգնելու անկա-
րող, և ամեն աշխատութեան, ամեն ծանր

վարձուներէն անյարմար ըլլալով՝ գաղանի հը-
նարքներու սրտանց՝ կը փակչի, մէկ գաղանի
կիւքի մը հաւատարիմ պաշտօնեայ, կերտ-
կուր մը լաւ աստղերէլու վարպետ, անոր հա-
մար եղած ծախքը կարգի դնելու արժուէն,
ու տիկնանց հաճոյացող է: Բայց թէ որ իրեն
յանձնուի խտուրթեամբ խօսիլ աներսջ մը
կամ հնկան մը հետ, որոնք որ կուզենք հե-
ռուցնել, առանց ամհնալու և առանց ցու-
ղգալու կը հնաղանդի: Աւտի առ բանալն է
որ զիւրին կ'ըլլայ զինքը որսչել: Այսն զի
ու զէ իրմէն այն բանը որ ամենէն անարդ ու
բոլորովին ամհնալու բան է, ամենուն ալ
պատրաստ կը գանես, ու քեզի հաճոյանալու
համար ամենեւին ինքըզինքը չհոգար:

Շողոքորթը ճանհնալու բաւական հաս-
տատ միջոց մ'ալ անոր պատրաստականու-
թիւնը մեր ճշմարիտ բարեկամներուն հետ
բաղդատելով քննելն է: Փոխադարձ բարե-
սիրութեան մը զգացումներուն շատ անձինք
բաժնորդ ընելէն եւել քաղցր բան չկայ, ու
ճշմարիտ բարեկամ մը անդադար կ'աշխատի
մեզի բոլոր իր ծանօթներուն սիրելի ու մե-
ծարելի ընելու: Թէ որ համալու ինք եթէ բա-
րեկամաց մէջ ամեն բան հասարակաց է, բա-
րեկամութիւնն է մանաւանդ որ կ'ուզէ անոնց
ամեն բան հասարակաց ընել: Բայց շողոքոր-
թը՝ այն սուտ ու անզգամ բարեկամը՝ որ չը
կրնալով շտեմնելու զարնուիլ այն անիրաւու-
թիւններով որ ըրած է բարեկամութեան մէջ,

օտակի պէս անիկա խարդախելով, իրեն բը-
 նական եղած նախանձը իրեն նմաններուն
 դէմ կը գործածէ, ու հացկատակութեան ըն-
 թացքին մէջ անոնցմէ գերազանց գտնուիլ
 կ'ուզէ: Իսկ ճշմարիտ բարեկամներէն կը վախ-
 նայ, կը սասկայ, վասն զի անոնց քով ան մար-
 դուն պէս է, « որ կ'ուզէ ստքով հասնիլ,
 արագընթաց նժոյգներու վաղցուցած կառքի
 մը ետեւէն կամ Սիմոնիդէսին ըսածին պէս,
 շատ մաքուր ոսկիի քով խարդախուած կա-
 պարի նման է »: Նաև շողոքորթը աղէկ հաս-
 կընալով թէ ճշմարիտ, հաստատ ու աղէկ
 բնաւորութեան աէր բարեկամի մը հետ բաղ-
 դատուելով պիտի ճանչցուի թէ ինքը որչափ
 թեթեւամիտ, սուտ ու խաբէբայ է, այն
 նկարչին պէս կ'ընէ որ ծաղրական կերպով
 աքաղաղներ նկարելով՝ կենդանի արագազ-
 ները իր պատկերէն խրտուեցունէ, այսպէս
 կը հեռացընէ ճշմարիտ բարեկամները. թէ
 որ չկրնայ իր այս բազմանքին հասնիլ, հրա-
 պարակաւ ճշմարիտ բարեկամները կը շողոքոր-
 թէ, իրենց ետեւէն կ'իյնայ, կը բնտուէ, և
 իւր մեծարանաց ապացոյցները անոնց շե-
 ուոյլութեամբ կը վասնէ. բայց գաղաուկ
 անոնց դէմ զրպարտութիւններ կը ցանէ, և
 իր երկայն խօսքերովք ան զրպարտութիւն-
 ներն աւելի կը դառնացընէ, ու թէ որ ըրա-
 ծին ներգործութիւնը շուտով մը իր ակըն-
 կալութեանը չպատասխանէ, հաւատարմու-
 թեամբ Մեդէոսին կրթութեանը կը հետեւի:

ան շողոքորթներուն խումբին ճարտար գլխաւորին և պարագլուխին պէս է, որ Աղէքսանդրի բոլորախօն էին և անոր պալատին ամենէն պատուաւոր մարդոցը դէմ կենալու միաբանած: Ատիկա կը հրամայէր իր ընկերներուն որ զանանք յանդգնաբար զըսարտեն, ըսելով անոնց թէ վէրքը բժշկուելու ալ որ ըլլայ, սպին միշտ կը մնայ: Ասանկով եղաւ որ այս իշխանին սիրտը այն սպիներով կամ մանաւանդ այն մաշող խոցերով ծածկուած, կորսընցնել տուաւ Ապլիսթէնէսը, Պարմենիոնը, Փիլատոսը, և առանց զգուշութեան ինքըզինքը տուաւ Մգնոններու, Բողուասներու, Ագեսիաններու և Գեմետրիաններու ձեռք, որոնք զինքը բարբարոսաց կուռքերուն նման պաշտելով ու զարդարելով, տիրեցին իր մտքին ու զինքը գէշցնելով ու զածնին գլուխ հանեցին. շողոքորթութիւնը այսչափ ուժ ունի և գլխաւորաբար մեծ մարդոց վրայ: Եւ սրախետեւ մեծամեծք բոլոր սղէկ հանգամանքներուն կը բաղձան, ու կը կարծեն թէ անոնց ամենն ալ ունին, այս պատրաստական յօժարութիւնը կը բաշտելէ շողոքորթը և անոնց մտքին մէջ իրեն վստահութիւն գտնել կու տայ: Բարձր տեղեր մօտենալը դժուար բան է, բայց բարձրութիւնն ու ամբարտաւանութիւնը մարդոցմէ ամենէն անարգին գիւրամատչելի կ'ընեն այն տկար հագին, որուն որ աչքերը իր ճնաւնդն ու իր բազդը չլացուցած են:

Ինչ որ խօսքիս սկիզբը ըսի, նորէն կը կրկնեմ, պէտք է մարդուս արմատէն կտրել նեւեւ իր սիրտին մէջէն անձնաստիճութիւնն ու իր վրայ ունեցած աղէկ կարծիքը, ասոնք մեզ պաշտօններուն մէջ առաջինն են, որ օտար շողքորթներուն դուռ բանալով, մեզի դիւրաւ մոլորող կ'ընեն: Բայց թէ որ Ազգողոսին տուած « ծանիր զքեզ » պատգամին հնազանդ դանուինք, թէ որ ստանալիք բաներնուս մէջ ամենէն աւելի էական՝ այս ինքզնինքնիս ճանչնալը բռնելով, մեծ ջանքով քննենք ինչ որ բնութենէն ու կրթութենէն ընդունած ենք. բնութենէն ու կրթութենէն ընդունածնիս մեզի պիտի երեւան անանկ անկատար, անանկ պակասաւոր, մեր գործքերուն՝ մեր խօսքերուն ու մեր ախորժակներուն մէջը չարն ու բարին անանկ խառնուած, որ մենք մեզմէ շողքորթին աւարառութիւնը պիտի արդիւնիք: Աղէքսանդր կ'ըսէր թէ իր քնանալու և կանանց ունեցած հակամտութիւնը որոնց որ թող տուէր էր իրեն տիրել, իրեն աղէկ կ'իմացնէին թէ ինքը աստուած չ'է, թէ և իրեն աստուծոյ անուն կը տրուէր: Մենք ալ միշտ մեր անկատարութիւնները մեր պակասութիւններն ու մոլութիւնները նկատելով, պիտի իմանանք թէ կարօտութիւն ունինք չէ թէ շողքորթի մը որ մեզի շուայլութեամբ դովութիւն տայ, հասցա հաւատարիմ բարեկամի մը որ բացէ 'ի բաց մեր պակասութիւնները աչքերնուս առջին դնէ:

Բայց քիչ մարդիկ կը գտնուին որ իրենց բարեկամներուն հետ ազատաբերան վարուելու արիութիւնն ունենան, և մանաւանդ անոնց շողոքորթութիւն ընել չնային: Ա՛լ աւելի քիչ են անոնք, որ ազատաբերանութիւնը յարմար ժամանակ գործածել գիտնան, և ան ալ դառն խօսքերու ու կշտամբանաց մէջ չկայացնեն: Քանի մը դեղերու պէս գէշ գործածուած ազատաբերանութիւն ալ կայ, որ կը տանջէ, անօգուտ տեղը կը նեղէ, ու ցաւով կ'ազդէ ինչ որ շողոքորթութիւնը մեզի հաճոյանալով կ'ընէ: Աշտամբանքը՝ նաեւ շատ անգամ տեղին չընկած գովութիւնները միշտ զգուելի են, ու ինքզինքնիս շողոքորթներուն ձեռքը դիւրաւ յանձնելու՝ ասոնցմէ աւելի բան չկայ. ինքնիրեննիս անոնց առջեւը կ'երթանք, ինչպէս որ ջուրը բնականապէս անհարթ ու զառիվեր տեղերէն հովիտներու ու դաշտերու մէջ կը հոսի: Աւրեմն պէտք է որ ազատաբերանութիւնը քաղցրութեամբ բարեխառնուի, ու խօսքին ոճը որ կը գործածուի, սիրտ ծակող բանը անոր մէջէն վերցնէ, ինչպէս որ մարդս մէկ սաստիկ խիտ օդը բարեխառն ընելու կը ջանայ, առանց ասոր՝ այն խիտ դատաւորէն ձանձրացածի պէս որ ամենափոքր բանը յանցանք կը սեպէ, ինքզինքնիս շողոքորթին գիրկը կը նետենք հսն քաղցր ու հաճելի պատասպարան մը փնտռելու համար: Վասն զի՝ մոլութենէն պէտք է առաքինութեամբ փախչել, իմ սի-

բելի Անտիոքոսս, ու չէ թէ հակառակ մու-
 լութիւնով, ինչպէս որ կ'ընեն անոնք, որ
 կը կարծեն, լրբութեամբ՝ չարաչար ամշնալէն
 ու շողքորթութեամբ՝ ծանրութենէն ետ կե-
 նալ, նաև կը կարծեն թէ թուլամորթութե-
 նէ ու վախկտութենէ այնչափ շատ հե-
 առ կը կենան, որչափ որ ինքնահաւանութեան
 ու յանդգնութեան կը մօտենան: Աւրիշներ
 անապաշտ չըլլալու համար ամբարշտութեան
 մէջ կ'իյնան, պարզամիտ ըլլալէն վախնալով՝
 նենգաւոր ու խաբեբայ կըլլան, ու իրենց
 սարքը կանոնաւորել չգիտնալով՝ կը գործեն
 այն անհմուտ պարտիզպանին պէս որ ծա-
 ուերը շտկելուն տեղը դէպ ՚ի հակառակ
 կաշմը կը ծռէ. ասիկա խիստ տգիտաբար
 շողքորթութենէ փախչիլ է, քան թէ անոր
 պարսպ տեղը մնաս տալ: Միայն գեղջուկ
 և կեծաց ընտանսութեան անյարմար մարդուն
 կը վերաբերի ուրիշ կերպով ցած շողքոր-
 թութենէ չփախչիլ հասլա միայն տխուր
 և անհաճելի բնաւորութեամբ, այն աղա-
 տագրեալին պէս որ կատակերգութեան մէջ
 կը կարծէ թէ նախատինք տալը աղատու-
 թեամբ խօսելու իրաւունք է: Թէ որ հաճո-
 յանալ ու զէլով շողքորթ ըլլալը ամշնալու
 բան է, շողքորթութենէ փախչելու համար
 չչափաւորուած աղատաբերանութեան մէջ
 իյնալն ալ անկէ վար չմնար, որ հաւատար-
 մութիւնն ու բարեկամութիւնը կ'աւրի: Հե-
 առ փախչինք այս երկու չափազանցութիւն

ներէն ու գիտնանք որ ազատաբերանութիւնը, ինչպէս որ ուրիշ բոլոր ազէկ որպիսութիւններն ալ ճիշդ մէկ կէտ մ'ունին : Այս ճառը լմնցնելէն առաջ պարտք կը տեսնուի մը կանոններ աւանդել, որն որ կ'երեւայ թէ բանն ալ ինքնին կը պահանջէ :

Հատ անգամ ազատաբերանութեան մէջ շատ սակասութիւններ կը խառնուին, օր. օր. ջինք՝ անձնական շահն է, որն որ նախապէս ազատաբերանութենէն պէտք է զատել, անանկ անիրաւութիւն մը յանդիմանող երեւալու վախով, որուն որ պատճառը մեղք ենք : Երբ որ մէկը ինքրդինքնին համար կը խօսի, կ'երեւայ թէ կը գործէ չէ թէ բարեսիրութեամբ հասցա բարկութեամբ որ առաւել յանդիմանութիւն մը կ'ընէ քան թէ կարծիքը կ'ըսէ : Այնիւ բարեկամի մը գործէ ազատութեամբ խօսիլ, բայց գանգատները միշտ ցածհագիութենէ և անձնասիրութենէ առաջ կու գան : Նաև ազատ բերնով խօսողներուն վրայ մեծարանաց ու զարմացման զգացումներ միտքէն կանցընէ՝ արդեօք մէկը, քանի որ գանգատը արհամարհանք ու սրտմտութիւն կը գրգռէ : Ազամեմուն՝ որ Ա. քիլէսին համարձակութեանը վրայ կը զարմանար թէպէտ և այն համարձակութիւնը շարժառեւէ կ'երեւար, կը համբերեր որ Ոգիտեսն իրեն խիստ կերպով ըսէ .

* Իսկն արժանի չէիր, տկար ու վախկոտ իշխան,

Ասանկ քաջ զինուորներու ։

Գիտնալով որ Ռդիսեւս անձնական առիթ մը չունի, և միայն Յունաստանի բարւոյն համար կը խօսի, բարեկամութենէ և բանակապետութենէ թելադրուած յանդիմանութիւններուն մտիկ կ'ընէր. բայց Աքիլէս մասնաւոր վրէժխնդրութեան մը հետեւած կ'երեւար: Աքիլէս անգամ որ ոչ քաղցրաբարոյ ոչ ալ խօսքի եկող էր, բայց բուռն բնաւորութեանը մէջն ալ զինքը խիստ անմեղ մարդ մը համարել կարելի էր, կը համբերէր որ Պատրակղ իրեն այս եղանակաւ խօսի.

« Զէ, ամենեւին ոչ թէտիոն է, և ոչ Պէ-

զէսի զուակը

Որ քեզի աշխարհք բերեր են: Կատաղի մայր մը

Կամ սոսկալի ժայռ մը միայն շիներ են այս սիրտը

Որ ամենեւին չճանչնար ոչ գթութիւնը և ոչ հեղութիւնը ։

Հիպերիդէս ճարտասանը տեսնելով որ իր ճառերը Աթենացւոց սիրտը վերաւորեր են, իրենց կ'ըսէր քննել շէ թէ անոնց մէջ սիրտ ծակող բան մը գտնուիլը հապա անոնց առանց իր անձին շահը փրնտաւելու ըլլալը: Ասանկ ալ բարեկամի մը յանդիմանութիւնները, երբոր ամեն անձնական յօժարութիւններէն ազատ են, պէտք են որ յարգանք ու հնազանդութեամբ մտիկ ըլլուին: Թէ որ մէկը միայն իրեն վերաբերեալ սխալանքը մէկ

դի ձգելով, ուրիշներուն օգտակար ըլլալիք սխալմունքը կատարեալ ազատութեամբ ցուցնէր, անհնար պիտի ըլլար դէմ կենալ անանկ ազատաբերանութեան մը որուն քաղցրութիւնն ալ աւելի պէ՛տ ու ծանրութիւն պիտի տար խրատին: Խոհեմութեամբ ըսուած է թէ Երբոր մէկը իր բարեկամին դէմ ցաւելու արդար առիթներ ունենայ, պէտք է աւելի փրնտուել այն բանը որ անոր օգտակար ու պատշաճ կրնայ ըլլալ:

Այնիւ բարեկամութեան մը քիչ արժանի բան չէ, երբոր մէկը իր անձը արհամարհուած գիտնալով, ազատ բերնով խօսի ուրիշ բարեկամներու համար, որոնք ալ իրեն պէտերեսէ ձգուած կը տեսնէ: Ասանկ ըրաւ Պղատոն երբ տեսաւ որ Գիսնեսիոս իրեն հետ պաղ կերպով կը վարվէր, իրմէն խնդրեց որ ունկնդրութիւն մը ընէ, և ուզածը ձեռք բերաւ: Իշխանը տարակոյս չունէր թէ իմաստասէրը գանգատ պիտի ընէ, բայց Պղատոն իրեն այսպէս խօսեցաւ. « Թէ որ իմանայիր, » Գիսնեսիոս, եթէ մէկ մարդ մը գէշ դիտաւորութեամբ Սիկիլիա եկած ըլլար, ու » միայն դիպող ժամ մը ձեռք բերելը զինքը » արգիլէր միտքը դրածը կատարելու, դուն » անիկա անպատիժ քու տէրութենէդ դուրս » ելելու կը թողու իր արդեօք: — Ոչ, ասոր » տարակուսել պէտքը չէ, ըսաւ Գիսնեսի- » ոս, քանզի պէտք է ատանկ թշնամիներուն » գէշ դիտաւորութիւնը պատժել ինչպէս որ

ո իրենց գործած յանցանքը կը սրտոժուի : —
 “ Արևնեց Պղատոն , բայց թէ որ բարի դիտա-
 ոււորու թեան տէր մարդ մը եկած ըլլար քեզի
 ո կարեւոր ծառայու թիւն մ'ընելու , ու մի-
 ո այն դռն անոր յարմար ժամանակ չթո-
 ո ղէիր մտքը դրածը զլուխ հանելու , ինքը-
 ո զինքդ անոր երախտապէտ ըլլալէն ազատ
 ո կը կարծէիր արդեօք , և անոր հետ արհա-
 ո մաքհանօք կրնայիր վարուիլ : — Ա՛՛վ է ատ
 ո մարդը , ըսաւ բռնաւորը , որուն համար կը
 ո խօսիս : — Շարունակեց Պղատոն , Եւզինէսն
 ո է , Սսկրասայ ամենէն աւաքինի աշակերտ
 ո ներէն մէկը , իր վարքովը ամենէն բարե-
 ո բարոյ , ու իրեն հետ մէկտեղ կիցողները
 ո աղէկութեան մ'ջ քաջ հանգիսացնելու ա-
 ո մենէն աւելի յաջողակ մարդը : Տո՛վեր պատ-
 ո ուեց որ կարող ըլլայ գալ քեզի հետ մէկ
 ո տեղ իմաստասիրութեան վրայ խօսիլ , ու
 ո բոլորովին երեսէ ձգուած կը մնայ հի-
 ո մայ ” : Աս խօսքը Դիոնէսիոսին վրայ անանկ
 ո աղէկցութիւն մ'ըրաւ , որ Պղատոնին հագ-
 ուոյն անուութեանն ու մեծութեանը վրայ
 ո զարմանալով , խանդակաթ ո՛րով դրկեց զինքը
 ու անկէ ետև Եւզինէսին հետ շատ նշանա-
 ուոր ակնածութեամբ վարուեցաւ :

Նաև պէտք է որ ազաաաբերանութիւնը՝
 շարութիւն , ծաղը ու շողքորթութիւն աղ-
 դող ամեն բաներէն հեռու ըլլայ , ասոնք
 անանկ գէշ համեմներ են որ միայն կրնան ա-
 ղատաբերանութիւնը գէշցնել : Վիրաբոյժ

մը անդամաճարութեան գործ մը կատարելու
 ատեն շատ ճշդութիւն ու զգուշութիւն
 պորձածելու կարօտ է. բայց պէտք է ալ
 խափանել ամեն պահովէ՛ շարժմունքներ,
 ամեն յանգուգն ու անօգուտ անդամաց ցըն-
 ցութեան, որոնք միայն իր ձեռքին յաջողա-
 կութիւնը ցուցնել նպատակ պիտի ունե-
 նային: Նմանապէս ազատարեքօնութիւնը
 կրնայ քաղցրութիւն և պնուսութիւն ըն-
 դունիլ, որ իրեն էական եղած արժանա-
 պատուութիւնը պահէ. բայց պուսութիւ-
 նը, խտութիւնը և անարգանքը, բոլոր իր
 աղէկ ներգործութիւնը իրմէ կը վերջընեն:
 Օրինակի համար, երաժիշտ մը խիտա ճար-
 տարութեամբ գիւցաւ Փիլիպպոսին բերանը
 գոցել, որ իր արհեստին կանոններուն վրայ
 իրեն հեռ կը վիճէր: «Աստուած չընէ որ
 Տէր, ըսաւ անոր, դու այնչափ գժբաղդ
 ըլլա՞ս ատոնք ինձմէ աղէկ գիանալու»: Բայց
 Եպիֆարմոս այնչափ խելացի պատասխան չը-
 տուաւ Ներոնին, որ զինքը կը հրաւիրէր
 հացկերոյթի իրեն բարեկամներէն շատերը
 մեռցնել տալէն քիչ օր ետքը, «Դուն ինձի
 անցածները չհրաւիրեցիր, երբ քու բարե-
 կամներդ զսհեցիր»: Այսպէս կ'ըսեմ Ան-
 տիփոնին համար ալ, որ անանկ օր մը Դիո-
 նտիոսին քսմն ըլլալով, երբոր վէճ կ'ըլլար
 թէ ո՞ր պղինձը ամենէն աղէկ է, ըսաւ. «Այն՝
 որն որ Աթենացիք գործածեցին Արմոզիո-
 սին ու Արիստոգիտանին արձանները ձուլե-

լու (10) ու Սա նախատինքներուն ունեցած դառ-
 նութիւնը չուղղուիր, և նպատակինն ու
 հաճոյականութիւննին ամենեւին չզուարճա-
 ցնէր: Թէ մէկը և թէ միւսը՝ միմիայն աստեք
 օրինաւոր համարողին վրայ շարութիւն մը
 անարգելու բաղձանք, վերջապէս մէկ ա-
 տելութիւն մը կը ցուցնեն, ուր շատ ան-
 գամ՝ իրեն մահաախիժ կ'ըլլայ, ինչպէս որ
 կ'ըսուի « Զքհորին շատ մօտ պարելնուն
 համար ». ուստի Դիանէսիոս Ա՛նտիփոնը մեռ-
 ցրնել տուաւ. Տիմազինէս Կեսարին իր վրայ
 ունեցած սէրը կորսնցուց, չէ թէ անոր հետ
 ազատ համարձակութեամբ մը խօսելուն հա-
 մար, հասցա այն պատճառաւ որ սեղանի
 վրայ և դբօսանաց ժամանակ « Անգործ պա-
 լատականները զուարճացնել նայելով ո, միշտ
 օրինաւոր կը սեպէր նախատական զուարճախօ-
 սութիւնները, որ ինքը բարեկամութեամբ հա-
 մարձակութիւն առնուած բաներ կը կարծէր:

Կատակերգակ բանաստեղծները շատ ան-
 գամ գերասաններուն բերանը քաղաքակա-
 նութեան գեղեցիկ օրինակներ կը գնէին,
 բայց ան խեղկատակութիւնները որ անոնց
 հետ խառնուած էին, ան ազատաբերանու-
 թեանէն կը վերցընէին ինչպէս որ գէշ հա-
 մեմուած աղէկ կերակուրէ մը, իր մրցանակն
 ու օգտակարութիւնը: Այն բանաստեղծ-
 ներուն շար ու վտանգաւոր մարդոց անուն
 տալ կու տային, ու հանգիսականները անկէ
 օգուտ մ'ալ չ'էին քաղէր: Բարեկամաց հետ

ուրիշ կերպ կատակ ընել պէտք է : Ազատաբերանութիւնը պէտք է որ միշտ ծանր ու խոհեմ կերպով ըլլայ , ու թէ որ անոր նիւթը կարեւոր բան ըլլայ , պէտք է որ խօսքին ձայնը , մարմնայ շարժումները և արժանաւորութիւնը վստահութիւն ու համոզումն մտցնեն :

Յարմար ժամանակին պակաս գործելը՝ շատ մեծ բաներ պարսպը հանել կուտայ , բայց գլխաւորաբար ազատաբերանութիւնը անօգուտ կ'ընէ , ուստի պէտք է անիկա սեղանի ատեն մէկգի ձգել : Գեղեցիկ երկինքի մը պարզութիւնը վերջովէլ է , խառնելն ուրախութեան և զուարճութեան մէջ որ սեղանի վրայ տեղի կ'ունենան՝ անանկ խօսքեր , որ կը տխրեցնեն ու երեսներու վրայ տրամութիւն կը տիրեն , և ինչպէս որ կ'ըսէ Պինդարոս՝
 « Ասիկա ինքըզինքը թշնամի ցուցընէլ է Բաքոսին , այն աստուծոյն որ տխուր հոգիներուն շղթաները կը խորտակէ » : Աս անյարմար ժամանակը ուրիշ կողմանէ ալ իր վտանգներն ունի : Գինին բարկութիւն կը բերէ , ու գինովութեան ատեն ազատաբերանութիւնը կրնայ ատելութիւն ծնանիլ : Ընդհանրապէս աւելի թուլամորթութիւն քան թէ ակնուականութիւն ու արիութիւն կ'ըլլայ , միմիայն կերակուր ուտելու ատեն անվախութեամբ խօսելու համարձակիլ , ինչպէս որ վախկոտ շուները ուրիշ ատեն այնչափ շէն հաջեր , որչափ որ սեղանին բոլորովքը : Բայց անօգուտ է այս նիւթին վրայ երկար խօսիլ :

Շատ մարդիկ կը վախնան որ բարեկամ
 մը զգաստացնեն անոր յաջողութեան ա-
 տենը . վասն զի զանիկա ան ատենները ամեն
 խրատի անողոքելի կը կարծեն : Բայց երբոր
 իմանան անոր մէկ ձախորդութիւնը որ զինքը
 կ'ընկճէ ու կը խոնարհեցընէ , ինչպէս որ
 բնութեան վերջին ճիգը կը յաղթանակէ խիստ
 սաստիկ հիւանդութիւններուն վրայ , ան
 ատեն այն բարեկամին վրայ , կը յարձակին
 առանց խնայելու , իրենց ծաղը ընելու առ իթ
 կ'ընեն անոր ձախորդութիւնը , և ուրախու-
 թեամբ անվայելուչ ազատաբերանութիւն մը
 կը գործածեն , անոր ամբարտաւանութեան
 և իրենց յատուկեղած տկարութեան վրէժն
 առնելու համար : Քննենք աս տեղ՝ այս ե-
 ղանակ գործելը : Եւրիպիդէս ըսած է . « Ին-
 չու պէտք է մարդու բարեկամ , երբոր հա-
 բուստ է » : Պատասխան տանք Եւրիպիդէսին
 թէ Յատկապէս բարեբաղդ մարդոց պէտք
 է հաւատարիմ բարեկամ մը որ իրենց չափա-
 լորութիւն սիրել սորվեցնէ : Քիչ մարդ կը
 գտնուի որ յաջողութեան ատեն ինքրդինքը
 խելօք բռնէ : Շատերը մէկ օտար խելքի
 մը կարօտութիւն կ'ունենան , որ մեծ յա-
 ջողութիւններու իրենց պատճառած յուզ-
 մունքն ու վիքացումը վերցնէ : Բայց երբոր
 ինքն բաղդը անոնց ամբարտաւանութիւնը
 յաջողութիւններնուն հետ մէկտեղ կը կոր-
 ծանէ , այն ձախորդութիւնը միայն բաւա-
 կան սաստիկ կշտամբանք մ'է զանոնք զեղջի

բերելու, ան տունն իրենց բարեկամներուն
ազատաբերանու թեանը կարօտութիւն չու-
նին, ոչ ալ կծու ու խիստ կշտամբանաց :
Դժբաղդութեան մէջ Քաղցր բան է բարե-
կամի մը տեսութիւնը վայելել, որուն ներ-
կայութիւնը մեզի կը մխիթարէ ու կը քա-
ջալերէ : Այսպէս կուսներու ու վտանգնե-
րու մէջ, Քսենոփոնին ըսածին պէս, կլէար-
դասին քաղցր ու զուարթ նայուածքը զին-
ուորներուն արխութիւնմը կ'ազդէր : Դժբաղդ-
մարդու մը հետ ազատ բերնով խօսիլը, ցա-
ւոտ աչքերուն առջեւ լուսաւոր ճրագ մը
դնել է : Անոր ցաւը չբժշկելէն կամ չթե-
թեւցրնելէն զատ, արդէն խոցուած սիրտ մը
վշտացրնել է : Ան մարդը որ քաջաւոյժ է,
հանդարտ ողւով մտիկ կ'ընէ բարեկամին,
որ իր երեսը կուտայ իր անառակութիւնը,
իր պարապօրդութիւնը, իր ամեն տեսակ
զբօսանքները ու սեղանի վրայ ըրած անխոհեմ
չսայլութիւնները : Բայց երբոր հիւանդ ըլ-
լայ, ու դուն երթաս անոր ըսես թէ Անբա-
րեխառնութիւնը, փափկութիւնն ու հեշտ
տութիւնն են որ զինքը այն վիճակին մէջ
ձգեր են, անտանելի կ'ըլլաս և անոր ցա-
ւը կը ծանրացրնես : « Ի՞նչ ծանծրացու-
ցիչ մարդ ես, պիտի պօռայ, ես իմ կտակս
չինել կը նայիմ, ամենադառն գեղեր կ'առ-
նեմ, դուն ալ աս միջոցին կու գաս ինձի ի-
մաստասիրութիւն կը ծախես ու կը յանդի-
մանես » : Աւրեմն պէտք չէ դժբաղդներուն

ոչ ազատ բերնով խօսիլ, ոչ ալ բարոյական
խրատ, հասցա քաղցր ու մխիթարող խօսքեր ։
Երբոր տղայ մը կ'իյնայ, դայեակը կը վազէ
չէ թէ զանիկա յանդիմանելու, հասցա վեր-
ջընելու, անոր արցունքը կտրելու ու խա-
ղաղեցնելու, անոր անմտութիւնը սրտածե-
լու յարմար ժամանակը գիտէ ։

Կ'ըսուի թէ Դեմեարիոս Փաղերացին իր
հայրենիքէն աքսորուելով, ու թէքէի մէջ
աննշան կեանք մը վարելով, որ մը մեծ նե-
ղութեամբ տեսաւ Արատեսին իր քովը դալը,
որուն շնական համարձակութենէն կը վախ-
նար ։ Բայց իմաստասէրը՝ քաղցր խօսելու
եղանակ մը ձեռք առնելով, իրեն ըսաւ թէ
Իր աքսորը ամենեւին ցաւելու արժան թըշ-
ուառութիւն մը չէ, որովչեաւեւ զինքը ազա-
տեր է միշտ անստոյգ եղող կեանք մը վա-
րելէն, ու յորդորեց որ բուն իր անձին վրայ
իր սո՛՛՛՛ն ու մխիթարութիւնը փընտռէ ։ Կե-
մեարիոս առ խօսքերուն վրայ զմայլելով, և
իրեն քաջալերութիւն մը առնելով, իր բա-
րեկամացը ըսաւ « Ա՛հ, այսօր ալ ի՞նչ ուղեմ
ան հոգեքը և ան դորձքերը որ զիս կ'ար-
դիլէին ասանկ մէկ մարդ մը ճանշնալու » ։
« Յաւի տտեն պէտք են մխիթարող խօսքեր,
Բայց անխոհեմ միտքերը պէտք է սաստիկ
կշտամբել » ։

Ասանկ կ'ընէ վեհանձն բարեկամը ։ Բայց
այն ցած ու անարդ հարստութեան երկրպա-
ղութիւն ընդունելը կը նմանին կ'ըսէ Դիմաս-

Թե՛նէս, այն կոտորած կամ ճվլուած անդամ
 ներուէն, որոնց ցաւը կը նորոգի շատ փոքր
 դիպուածով մը: Ար նախատենք քեզի ձախոր,
 դու թեանդ ատենը, և քու թշուառութիւն
 ներուգ վրայ զուարճացած կ'երեւան: Թէ որ
 պէտք ըլլայ դքեզ զգաստացնել անանկ մէկ
 թշուառութե՛նէ մը որ անխոհեմութիւնդ
 քու վրադ բերեր է, քեզի պիտի ըսեն,

«Դուն ալ գիտես որ ետ ատոր հակառակ
 կարծիք ունէի»,

Քեզի ատ խորհուրդէդ ետ դարձնելու հա-
 մար կրցածս ըրի ո՛ւ:

Բայց հիմա դուն պիտի ըսես, հապա երբ
 պէտք է ազատ կերպով վարուել և ուժով
 խօսել: Ան ատեն՝ երբոր պահպանելու վրա
 յով ըլլայ ան բարեկամը՝ որ ցանկութիւնը,
 բարկութիւնը, անիրաւութիւնը, ազահու-
 թիւնը, կամ բոլոր ուրիշ չար կիրքերը մօտ
 են զինքը քաշելու, տանելու: Ասանկ եղաւ
 որ Սողոմն Արասոսին անցաւոր յաջողութեամբ
 ամբարտաւանիլը տեսնելով, իրեն իմացուց
 որ կենաց անատուգութեանը վրայով խորհի:
 Ասանկ ալ Սոկրատ գիտցաւ իր յանդիմանու-
 թիւններովը Ազկիբիադէսը պահպանել, ու
 զանիկա ինչուան արցունք թափելու մօտեցը-
 նելով, ճշմարիտ զղջում մը ներգործեց անոր
 սրտին: Ասանկ եղան Աբրասին Աիաքսարայ
 ըրած յանդիմանութիւնները, ու Պղատոնինն
 ալ Դիանին, այն ժամանակը՝ որ աս ետքինը
 փտուաց վերջին ատախճանը հասած, իր երե-

ւելի գործքերուն՝ գեղեցիութեամբն ու մե-
 ծութեամբը բոլոր աշխարհի զարմացումը իր
 վրան քաշէր աւեր էր, Պղատան իրեն կ'ի-
 մացընէր « Կնքըզինքը սահայանել յանձնա-
 ղապատան վատահութենէ, անանկ մղութենէ
 որ իսկոյն իր բոլորտիքը անապատ կրնայ
 ոգարձընել »: Սպիրիտուալ ալ իրեն գրեց ՝
 « Թէ իրեն կ'նիկնէրուն ու աղոյք ձեռքով
 հրատարակուած գովութիւններէն ամենե-
 ուին անապարծութիւն քաղել սէտքը չէր,
 հապա ջանք ընել որ իր բարի սովորութիւն-
 ներովը, արդարութեամբը ու Սիկիլիայի
 « մէջ հաստատակը խմատուն օրէնքներովը
 « պատիւ դանէ Ակադէմիային մէջ »: Ասոր
 հակառակ Եւկղիս ու Եւլայոս՝ Պերսէս-
 սին երկու սօրատականները, չէին դադարէր
 ինչպէս որ ուրիշներ ալ, զինքը շողքսթեւու-
 ամեն բանի մէջ, իրեն հաճոյսնալ բոլոր իր
 յաջողութեան ժամանակները: Բայց երբոր
 յաղթուեցաւ ու համլմայեցւոց ձեռքէն
 Պիւզնա փախաւ, իր վրայ շատ դառն նա-
 խատինքներ թափեցին, և իրեն յիշեցուցին
 իսկա նախատական խօսքերով իր պակասու-
 թիւններն ու անհոգութիւնները, անանկ որ
 այն խեղճ իշխանը իր ցաւերէն ու բարկու-
 թենէն չսփազանց վշտանալով, դաշոյնը
 քաշեց՝ երկուքն ալ սպաննեց: Ահա այն յար-
 մար առիթները որոնց մէջ կրնայ մէկը իր բա-
 րեկամներուն հետ ազատաբար խօսիլ, բայց
 սէտքը չէ անհոգ ըլլալ, երբոր անոնք ալ

երբեմն մեզի այնպէս խօսին : Հաստ անդամ
 մէկ հարցումուք մը , մէկ պատմութիւն մը ,
 քննութիւն մը կամ գովութիւն մը որ մէկը
 կ'ընէ նման վիճակի մէջ դանուսող մարդոց
 վրայով , բնական դուռ մը կը բանայ մեր առ-
 ջին՝ ազատ բերնով խօսելու : Օրինակի հա-
 մար Դիմարատոս Կորնթասէն Մակեդոնիա
 գալով ճիշդ ան ատեն , որ Փիլիսոսոս իր
 կնիկանը ու աղին հետ կուսայ (11) մէջ էր ,
 այս իշխանը իրեն հարցուց թէ Յայնք լա-
 բնտանութեամբ կ'ապրին մէկըմէկու հետ :
 Դիմարատոս որ շատ ժամանակէ 'ի վեր անօր
 առանձին բարեկամն էր , իրեն ըսաւ , « Իբաւ-
 » ջրնէ , Փիլիսոսոս , շատ աղէկ բան է որ
 » հոգ կ'ընէք , թէ Աթենացոց ու Պեղոսո-
 » նոսի ժողովրդոց մէջ համաձայնութիւն կը
 » տիրէ՞ արդեօք , երբ որ դուք անտարբեր
 » աչքով ձեր պալատը վրդովող անհամաձայ-
 » նութիւնը կը տեսնէք » : Դիոգինէս բըռ-
 նուելով Փիլիսոսոսի բանակին մէջը՝ որն որ
 Յունաց վրայ երթալու կը պատրաստուէր ,
 թագաւորին դիմացը հանուեցաւ , և որով
 հետեւ այս իշխանը Դիոգինէսը շէր ճանչ-
 նար , իրեն հարցուց թէ լատնս է արդեօք ,
 Դիոգինէս իրեն պատասխան տուաւ բաւա-
 կան ճշմարտութեամբ , թէ և քիչ մը աւելի
 համարձակութեամբ . « Այո , անտարակոյս ,
 » հոս եկայ իմանալ քու անխելքութիւնդ
 » ու անխահեմութիւնդ որոնք քեզի առանց
 » հարկաւորութեան վտանգի մէջ ձգել կու

Կ' տան մէկ ժամու մէջ՝ թագդ ալ կէանքդ ալ Կ' :
 Բարեկամ կշտամբելու մէկ ուրիշ յար-
 մար առիթն ալ այն միջոցն է , երբոր ինքը
 ուրիշի մը իրեն ըրած նախատինքովը խոնար-
 հած ու վրդոված է : Ան ատեն մէկ խո-
 հեմ ու ճարտար մարդ մը պէտք է առաջ
 ուժով մը այն դառն քննութեանը դէմ
 կենայ , ու իր բարեկամը արդարացնէ , ետքը
 առանձին տեղ մը տանելով , անոր հասկըցը-
 նէ որ աւելի զգուշութիւն ընէ իր անձին ,
 բայց միայն յանցանքը թշնամիներուն վրայ
 ձգելու մտօք : « Պիտի կրնայի՞ն անանք միայն
 Կ' բերան բանալ , կամ քեզի ըտելու խօսք մը
 Կ' ունենայի՞ն արդեօք թէ որ դուն քու պա-
 Կ' կասութիւններովդ անանց քեզի գէշ զրու-
 Կ' ցելու նիւթ չարատրաստէ իր Կ' : Ասով թշնա-
 միին վրայ կը ձգէ սիրտ ցաւցնող բանը , ու
 բարեկամին օգտակար եղածը ձեռք կը բերէ :
 Աւրիշներ՝ իրենց բարեկամը զգաստացը-
 նելու համար սլ աւելի ճարտարմտութեամբ
 օտար մէկը կը յանդիմանեն պակասութեան
 մը վրայով որ անիկա գործեր է : Օրինակի
 համար , օր մը կէսօրէն ետեւ եղած խօսակ-
 ցութեան պարագոյ ժամանակ Ամմոնիոս մեր
 վարժապետը , որ իմացեր էր թէ իր աշա-
 կերտներէն մէկ քանին ծանրագին կերակուր-
 ներով ցերեկուան ճաշերնին ըրեր էին , ա-
 զատ եղած ծառայի մը ձեռքով ձեծել տը-
 լաւ իր տղան , պատճառ բանելով թէ ա-
 ռանց քացախի չկրնար ճաշ ընել : Աս ըտե-

լու ատեն մեր վրայ դարձուց իր նայուածքը ,
 ու յանցաւ որնէրը իսկոյն ան յանդիմանու-
 թիւնը վրանին առին :

Նաև հեռու կենանք մեր բարեկամները
 հրապարակաւ կշտամբելէն ու յիշենք Պղա-
 տոնին ըրածը որ կերակրոյ վրայ տեսնելով
 թէ Սոկրատ շատ սաստիկ կը յանդիմանէ .
 իր աշակերաններուն մէկը , ըսաւ , “ Ա՛լ ազէկ
 չէ՛ր ըլլար որ աւանձին տեղ մը ատ յանդի-
 մանու թիւնը ընէիր : — Դու ալ , ըսաւ Սոկ-
 րատ , չէ՛իր կրնար սպասել որ ատ բանը ինծի
 ըսէիր , երբոր ես ու դուն մինակ մնայինք ո :
 Ա՛րտեն թէ Պիւթագորոս հրապարակաւ
 յանդիմանեց սլատանի մը անանկ խտու-
 թեամբ , որ յուսահատութենէն ինքըզինքը
 կախեց : Ան ժամանակէն ՚ի վեր այս իմաս-
 տասէրը ամենեւին ուրիշ ատեն մէկը չյան-
 դիմանեց , բայց միայն երբոր ինքն ու անիկա
 աւանձինն էին : Մոլութիւնները ամչնալու
 հիւանդութիւններ են , որոնց դարմանատրու-
 թիւնը գաղանի ըլլալու է , բայց ՚ի նախա-
 տինք մը տալու՝ պէտք է տեսնող և վկայ
 ըլլալէն ալ խորշիլ : Տգէտ մանկածուի գործ
 է և ոչ թէ բարեկամի՝ հրապարակաւ և
 բարկութեամբ յանդիմանել , ուրիշին յան-
 ցանքովը՝ ինքըզինքը յարգի մարդ մը ընել
 տալու մտօք , ինչպէս որ դերասանները թա-
 տեր մէջտեղը իրենց գործողութիւնները
 կ'ընեն , վարժութիւն ստանալու համար : Ուղ-
 ղել ուղղածնիս ամենեւին ձանցընել պէտք

չըլլալէն զատ, զգուշանալու ալ ենք որ բնա-
կանապէս խոտապարանոց ու յամառ մոլու-
թիւնը վերջին ատօիճանը չհասնի: Չէ թէ
միայն սէրը, ինչպէս որ կ'ըսէ Եւրիպիդէս,
“ Երբոր մէկը ուզէ զանիկա արգիլել, կ'աճի
արգելքներով ր,

Հասցա ամեն մոլութիւն, ամեն կիրք որ ա-
ռանց ակնածութեան հրատարակաւ կը պա-
խարակուին, ամենեւէն չափաւոր չեն ըլլար:
Պղատոն կ'ուզէ որ ծերերը երիտասարդաց
համեստութիւն ազդելու համար, նախապէս
իրենք անոնց առջին համեստութիւն ցուցը-
նեն. ասանկ ալ չափաւորութեամբ եղած
յանդիմանութիւն մը աւելի ամօթ կ'ազդէ
բարեկամին. ան քաղցրութիւնն ու զգուշու-
թիւնը որով իրեն պակասութիւնը երեսը
կը տրուի, զինքը վեր կ'առնեն ու մոլութե-
նէ կը հեռացընեն. նախ անոնց առջին կարմը-
րելով կ'ըլլոյ զանոնք ամբշտնել: Այսպէս
ընդունելի է հոմերոսին մէջ ըսուած մարդը
որ, վախնալով որ ուրիշը կը լսէ, ցած ձայ-
նով ահանջն ի վար կը խօսէր: Օրինակի հա-
մար, երկանը պակասութիւնը իր կնաջը,
հօր մը՝ իր տղոցը, սիրահարի մը՝ իր սիրել-
ւոյն, վարպետի մը՝ իր աշկերաին ներկայու-
թեանը յայանելու պէս անպատէհ բան չըլ-
լար: Ասան զի աս բանը անոնց սիրաբ խիստ
վերաւորել է, քան թէ զանոնք նուաստացը-
նել անանկներու առջեւ որոնց մեծարանքը
կուզեն յիշեալները: Անտարակոյս, Աղէք.

սանդրը՝ Ազխատոսին դէմ այնպէս՝ սատտիկ բար-
կացընողը գինին չ'եղաւ, հասպա աւելի ինք-
զինքը հրասրօրակաւ յանդիմանուած տես-
նելու սրտմառթիւնը : Արիստամենէս՝ Պաղը-
մէսս թագաւորին տանը վերակացուն, ար-
թընցընելով այս իշխանը որ դեսպաններուն
ունկնդրութիւն ըրած ատենը կը քնանար,
չողքորթները յարմար առիթ սեպեցին խեղ-
ճը կորսընցնելու, ու երեսանց շատ մեծ բար-
կութիւն ցուցնելով, որպէս թէ իշխանին
պատուոյն պաշտպան կայնած ըլլան, իրեն
ըսին « թէ որ դուք քնհատութենէն և աչ-
» խատութենէն ընկճելով երբեմն քուներնիդ
» կոխէ, պէտք է ձեզի իմացնել առանձինն
» և ոչ թէ այնչափ բազմութիւ անձանց ժս-
» ղովոյ մը առջին վրանիդ ձեռք դնել » .
Պաղմէսս աս խօսքէն զայրանալով, թոյն խրկեց
Արիստամինին : Արիստամինէս կ'ըսէ թէ
Կղէոն իր անձին կը մեղանշէր իր հայրենեա-
ցը գէշ ըսելով և օտարաց առջեւ Աթենա-
ցիները նախատելով : Ուրեմն ամենեւին ազա-
աաբերանութիւն չգործածենք սնապարծու-
թեամբ ու նախատիքով, հասպա միայն մե-
զի նպատակ ունենանք մեր բարեկամներուն
փրկարար խրատներ տալը :

Նաև պէտք է անձին սեփհականել այն
գեղեցիկ խօսքը որ թուկիդիտէս Կորնթաց-
ւոց բերանը կը դնէ, « Որպէս թէ իրենք
արժանի էին ուրիշները յանդիմանելու » : Մե-
զարացի պատգամաւոր մը դաշնակցելոց ժո-

զովին մէջը վճռական ոճով Յունաստանի օգտին վրայ կը խօսէր, « Բու ճառդ ըսաւ, Վեսանդր, քաղաքի մը կարօտութիւն պիտի ունենայ (12) » : Նոյնպէս կրնայ ըսուիլ և իրաւամբ, ան ուրիշները ուղղելու խառնուող ս և իցէ մարդոց համար ալ թէ « Ազատաբերանութիւնը ամբիժ բարքի կարօտ է » : Պղտատն կ'ըսէ թէ Սպետագործին կեանքը շարունակ դաս մ'էր : Արանկ ալ երբոր Պողեմօն Բսենոկրատին դպրոցը մտաւ, սս իմաստասէրին մինակ նայուածքները իրեն ինքզինքը ժողուել առին և առաքինութեան ճամբան մտցուցին : Բայց թեթեւաբարոյ ու ինքըզինքը քիչ կանանաւորած մարդ մը որ ուրիշները յանդիմանելու կը խառնուի, սա խօսքը ըտելու վտանգին մէջ կ'իյնայ :

« Խոցերով լեցուն, ուրիշները բժշկել
կ'ուզես » :

Բայց երբեմն կը ջանանք յայանել մեր բարեկամներուն այն սրահասութիւնները, որոնց մենք ալ տէր ենք, ամենէն աղէկ միջոց պիտի ըլլայ որ քննութեան ատենը մեզ ալ մէջ խառնենք մեր ըրածներուն համար : Արանկ Հոմերոսին մէջ Ոգիտեւս Գիոմեդեսին կ'ըսէ, « Ա՛յ մտոցնէլ աուաւ մեզի մեր առջև արիւթութիւնը,

և ուրիշ տեղ :

« Մինակ մէկ հեկատորի մը դէմ մեր ձեռքերը անկարող են » :

Այս քաղցրութեամբը Սոկրատ երիտա-

սարգնեբուն կ'ուսուցանէր : Անոնց պէս ազի-
 տութեան մէջ եղած կ'երեւար, և առաքի-
 նութեան վարժութիւն ընելու ու ճշմար-
 տութիւն փնտռելու հետեւող : Մարդս իր
 վստահութիւնն ու բարեկամութիւնը սրախ
 մտօք կը դարձընէ ան մարդուն վրայ, որն
 որ իր դորձած պակասութիւնները դորձած է
 և կ'ուզէ անոնց դարման տանիլ : Բայց ան
 մարդը որ ուրիշները ուզղելու ատեն ինք-
 ղինքը անպախարակելի և ամեն կիրքէ ազատ
 կը ցուցնէ, գոնէ թէ որ շունենայ մեր վրայ
 մեծկակ հասակի առաւելութիւն մը կամ
 հաստատուն առաքինութեան յարգ մը, ա-
 տելի և անտանելի կ'ըլլայ, և իր յանդի-
 մանութիւնները անօգուտ կ'ընէ : Աւրեմն
 շատ մեծ ճարտարութեամբ Փենիքս՝ Հոմե-
 րոսին մէջ Աքիլէսն իր բարկութեանը հա-
 մար յանդիմանելով, կը պատմէ այն թշուա-
 ռութիւնները, ուր որ ղինքը ձգեր էր այս
 կիրքը, այն դիտաւորութիւնը որ իրեն ներ-
 գործեր էր իր հայրը մեռցնելու, այն դի-
 տաւորութիւնը որ ինքը Յունաց մէջ հայ-
 րասպանութեան անունը կրելու վախովը՝
 իսկայն մէկդի ձգեր էր : Աքիլէսը նախա-
 տելու ատեն չուզեց, կարծիք ընելու թո-
 դու, թէ ինքը բարկութեան և կրօն
 բուռն յարձակման մէջ իյնալու անյարմար
 մէկը ըլլայ : Այս կերպ յանդիմանութիւն-
 ները ինչուան օրոքն իօրունկը կը մտնեն,
 և մեզի առանց դժուարելու անձնատուր

կ'ընեն անոնց որ մեզի պահարակելու միտք
չունենալով մեր տկարութիւններուն ներս
դամիտ կ'երեւան :

Յաւոտ աչք մը պայծառ արեւուն չկրնար
դիմանալ , ոչ ալ բուռն կիրքերով վարակ
եալ հոգիքն՝ իրօտ ազատ բերնով եղած յան
դիմանութիւններուն : Յանդիմանութիւնը
աղէկ ընդունելալու ամենէն ապահով միջոցն
անոր հեա գովութիւն մը խառնելն է , ինչ
պէս որ Հոմերոսի աս ստանաւորին մէջը ,
“ Ինչ ամօթ , ո՛վ պատերազմողներ արիու
թիւնը մոռնալ .

Թէ որ ուրիշներ հեռանային աւ քսիի անձ
նառաւր ըլլային ,

Ես պիտի լռեի . բայց դուք մեր վնասորու
թեան փառքերը ,

Դուք՝ կը վախճաց . . . ս'ն , սքախ բոլոր
վին դժուար կու գայ ” :

Նաև աս տողերուն մէջ

“ Ուր են արդեօք , Պունդարոս , այն աղեղն
ու այն ահաջին նեռերը ,

Այն փառքը՝ որուն հաստեղ մէկն ալ չհա
ւաճարեցաւ . ”

Հետեւեալ խօսքերը կիրքէ յափշտակուող
ներն զգաստացունելու ալ աւելի յարմար են :

“ Այս է ան Եդիպոսն ու իր համբաւա
ւոր աւեղձուածը ” :

ու նաև ,

“ Ինչ , այնչափ մեծ քաջութեան գործքերով
ճանչցուած այս դիւցազունը :

Ասանկով՝ չէ թէ յանդիմանու թեան ունեցած
 խտուածիւնն ու սաստկուածիւնը կը մեղմա-
 նայ, հապա կը լեցընէ նախանձաւորու-
 թեամբ այն սիրտը որն որ իր գեղեցիկ գոր-
 ծոցը յիշատակը իր պակասուածիւններուն
 համար զինքը կ'ամչցնէ, ու ինքը իր անձին
 իրեն պարտք եղած աղէկուածեանը գաղա-
 փարի մը պէս կը ցուցնէ: Բայց թէ որ զինքը
 ազգականի մը, բարեկամի մը, հայրենակցի
 մը հետ բազդատելու ըլլաս, անոր վրայ մո-
 լուծեան բնական կամակորուծիւն մը կը
 գրգռես, ու շատ անգամ այն բազդատու-
 թենէն զգացած սրտմտուածեանը պատճառա-
 քեղի պիտի ըսէ. « Ինչո՞ւ զիս հանգիստ չես
 » թողուր, ինչո՞ւ համար դուն չես հետեւիր ատ
 » մարդոցը որոնք ինձմէ աւելի աղէկ էին »:
 Ուրեմն ետ կենանք մէկը նախատելու ատեն
 ուրիշի մը գովուծիւն տալէն, գոնէ գոված-
 նիս հայր մը չըլլայ, ինչպէս որ ըրաւ Ագա-
 մեմնան Դիոմեդեսին հետ խօսելու ատեն⁽¹³⁾
 « Թեախօին տղան ո՞րչափ քիչ արժանի է
 անոր ».

ու Ոգիսեւս Ա. քիլլէսին, Կիւրիացւոց ող-
 բերդուածեանը մէջ,

« Յունաց մէջ ամենէն կարիճ մարդուն խոր-
 թացած տղան,

Դուն վատանուն կ'ընես անանկ յարգի ան-
 ուան մը պայծառուծիւնը,

և անարգ իրիկի մը համար կը մոռնաս զէնքերը:
 Յանդիմանուծեան գէ՛մ յանդիմանու-

Թիւն, ու ազատաբերանութեան դէմ ազա-
տաբերանութիւն գործածելու պէս ալ ան-
վայել բան չըբար: Անկէց միշտ կռիւ առաջ
կուգայ, որ ընդհանրապէս կը ցուցնէ չէ թէ
փոխադարձ ազատաբերանութիւն մը, հասպա-
անանկ մէկ տկարութիւն մը որ ուրիշին տկա-
րութեանը վրայ կը վշտանայ: Աւտօի շատ
ազէկ է քաղցրութեամբ ընդունիլ բարեկա-
մի մը յանդիմանութիւնը, ու թէ որ ետքը
ինքն ալ սրահասութեան մը մէջ ինկած ըլլա-
լով կարօտութիւն ունենայ մեր խրատին,
անոր մեր վրայ գործածած ազատաբերանու-
թիւնը՝ մերինին անոր վրայ իշխանութիւն
կուտայ: Իրաւունք է անոր յիշեցնել, բայց
ամենեւեմ առանց վրէժխնդրութեան նշմա-
րանայ, թէ ինքն ալ սովորութիւն ունի իր
սրահասութիւններն իրեն բարեկամներուն
յայտնելու, և այս յիշելը աւելի հեզ և
աւելի համբերող պիտի ընէ զինքը այն ուղ-
ղութեանը համար, որով ինքզինքը խրատած
կ'իմանայ, չէ թէ ջատագովութեան բաղձան-
քով մը, հասոյա բարեսէր կամաց ու բարե-
կամութեան զգացմունքով:

“Կարելի է, կ'ըսէ Թուկիդիտէս, մեծ բա-
նեւոր համար նախանձու մէջ իյնալ”:

Ասանկ ալ բարեկամ մը իր նախատինքներով
չհաճոյանալու վտանգի մէջ կրնայ իյնալ-
երբոր անոր նիւթը կարելուր բան մ'ըլլայ: Թէ
որ ասոր հակառակ աւելի տգէտ մանկածուի
բան թէ բարեկամի ոճ ձեռք առնելով

անտի բաներու վրայով ինքզինքը անտանելի
 ընէ, իր խրատները կարելոր բաներու մէջ
 իրենց պէն ու ներգործութիւնը կը կորսն-
 ցընեն, վասն զի շարաշար գործածած պիտի
 ըլլայ ազատաբերանութիւնը, ան բժշկին
 նման որ թեթեւիկ հիւանդութեան մը համար
 կը գործածէ ան դառն ու սաստիկ դեղերը
 որ միայն խիստ ստիպողական դեպքերու ա-
 տեն կը տրուի: Ուրեմն մեծ ջանքով ետ կե-
 նալու ենք այս պախարակելու յօժարութե-
 նեն: Թէ որ ուրիշ մէկը պղտփկ բաները
 մեծցնելով զանոնք մեծ յանցանք մը երեւցը-
 նել ուղէ, աս ալ իրեն հաճար պակասու-
 թիւնը շատ մեծ համարելու առիթ մը պիտի
 ըլլայ: Փիղորտիմոս բժիշկը լերդի հիւանդու-
 թիւն ունեցող մէկը տեսնելով որ մատին
 վրայ ըստ դիպաց եղած ցաւի մը բոլոր-
 վին զբաղած էր, « Բարեկամս, բաւ անոր
 » հիմա մատիդ փոքրիկ խոցը մտածելու ժա-
 » մանակ չէ »: Նոյնպէս մենք ալ թէ որ տես-
 նենք մէկը որ թեթեւ պակասութեանց հա-
 մար իր բարեկամը կը յանդիմանէ, պէտք է որ
 իրեն ըսենք, « Չնշին բաներու և ընթրեաց
 » ու զքօսանաց վրայ չկայնինք կենանք. ոհ,
 » թող ետ դարձընէ իր տարիածուն, թող
 » բազդովի խաղերէն ետ կենայ ու բոլոր ու-
 » րիշ այսպիսիններէն հրաժարի, ան ատեն
 » ինքը զարմանալի մարդ մը կ'ըլլայ մեր առ-
 » ջին »: Առանց անհամայ երեւնալու փոքր
 պակասութեանց դիւրաւ ներելը, մեծե-

ըր պախարակելու իրաւունք ձեռք բերել է : Բայց ով որ միշտ խիստ ու դառն ըլլալով ճշդութեամբ ամեն բան կը մեծցնէ ու բանի մ'ալ ղիջում չ'ընէր , իր զաւկներուն , իր եղբարցն անգամ անտանելի կ'ըլլայ , ու իրեն գերիններուն ալ տաղտկալի :

Տերութեան ատեն ամեն բան անհաճոյ չէ , կ'ըսէ Եւրպիոզէս : Արանկ ալ մեր բարեկամաց պահասութիւնները առանց առաքինութեան խառնուրդի չ'են ըլլար : Ուրեմն պէտք է դիտել ոչ միայն գէշ գործքերը , հասպա ան աղէկութիւններն ալ որ կրնան ընել , ու յօժար սրտով զանոնք գովելու սկսիլ : Երբ որ երկաթը կրակով կը կակուղնայ ու կը տարածուի , անոր ջուր կուտան որ զանիկա աւելի խտացնէ ու սուրցնէ : Նոյնպէս երբ որ մէկը գովութեամբ իր բարեկամը տաքցուցածի պէս ըլլայ , կրնայ տալ թէ որ այսպէս ըսել արժան է , անոր սրտին աղէկ ջուր մը , աղատաբերանութիւնը քաղցրութեամբ գործածելով : Ան ատեն ժամանակ է բարեկամին ըսելու . « Բու ետքի » գործքերդ առջիններուն արժանի են արդեոք : Տես թէ առաքինութիւնը ի՞նչ բարիքներ առաջ կը բերէ : Ահա քու բարեկամներուդ քեզմէ ուզածը , ահա այն բանները որուն համար սր ծներ ես դուն : Բայց ուրիշ գործքերը խրկէ ,

« Կամ լեռներու գլուխը կամ ծովերուն տակը » :

Գթոս բժիշկ մը իր հիւանդը կերակրոյ զգուշութեամբ ու քսենով բժշկել պիտի ուզէ, քան թէ բէշկ մշկոյով ու սակամունիայով: Նմանապէս կարեկից բարեկամ մը, փափկասիրտ հայր մը, բարեգութ վարպետ մը, երբոր ուզեն մեզի ուղղել, միշտ գովութիւնը յանդիմանութենէն նախամեծար պիտի համարին: Բան մը յանդիմանութիւնները այնչափ քիչ դժկամակ ու աւելի փրկարար ջաններ, որչափ որ անոնց մէջ կրից յափշտակութիւն շնորհներն և քաղցրութեան ու սիրոյ եղանակ գործածելը կրնեն: Պէտք չէ ոչ խօսքով խիտ յաղթահարել ան մարդիկը որ իրենց պակասութիւնը կ'ուրանան, ոչ ալ ինքըզինքը արդարացընելուն ականջ չկախել. այլ ընդ հակառակն զգուշանալ ու պատուաւոր միջոցները մտքը մտցընել, աչք գոցել իր պատճառին ունեցած անյարմար բանին վրայ, միմիայն ուրիշ յարմար օր մը տեսնելու մտօք: Այսպէս երբոր Հեկտոր Պարիսին ըսաւ.

“Այ խեղճ, ի՞նչու պէտք էր ասանկ քու սրտմտութեանդ հետեւիլ ոչ:

Անոր պատերազմէ ետ կենալը՝ զանց ընել տուաւ, չէ թէ փախուստի մը համար հապա անոր կրից յափշտակուելուն մէկ գործոյն համար: Նոյնը գործածեց Նեստոր երբոր ըսաւ Ագամեմնոնին. “Տեղի տու իր մէկ վեհանճն հոգւոյ մը կերպարանախոխութեանը ոչ: Աւելի աղէկ չէ արդեօք ըսել, Զբաղանքով սխալեր ես, քան թէ ըսել Անիրաւու.

Թիւն մը գործեր ես կամ անարժան բան ըրեր
 ես : Քու եղբօրդ վրայ մանրամասն քննու-
 թիւն մի ըներ , փախիր այն կնիկէն որ քեզի
 գլխէ կը հանէ , ըսելը , ալ աւելի անոյշ ե-
 ղանակ մ'է , քան թէ ասանկ ըսել , մի նա-
 խանձիր ամենեւին քու եղբօրդ վրայ , դա-
 դարէ՛ ատ կնիկը գլխէ հանելէն :

Ահա գործուած ընթացած գէշութիւնը
 ուղղելու պէտք եղած ազատաբերանութիւն-
 ները ասոնք են , բայց թէ որ բանը անար-
 աւաջքը առնելու վրայ է , ազատաբերանու-
 թիւնը ուրիշ կերպով ձեռք կ'առնուի : Օրի-
 նակի համար , թէ որ պէտք ըլլայ՝ մէկը իւր
 գործելիք պակասութենէն ետ դարձընել ,
 ոյժ ու զօրութիւն տալ տկար անձի մը որ
 ընչից համար տկարութեան մէջ ինկած է
 ան ատեն պէտք է սաստիւթեամբ անոր
 յայտնել ուն պակասութիւնը գործել տուող
 պատճառներուն ամէնալու բան ըլլալը . ինչ-
 պէս որ Ռդիսեւու Ստիսկղի գրոցը մէջ , Ափիւ-
 լէսը պատուոյ գրգռելու համար իրեն ըսաւ ,
 թէ , « Ոչ այնչափ բարկութիւնն է զինքը ան-
 գործութեան մէջ պահողը , որչափ որ Տրո-
 վադայի պարիսպներուն զարհուրելի տեսքը » ,
 և որովհետեւ Ափիւլէս զայրանալով կըսպառ-
 նար որ նաւը մտնէ ետ դառնայ , Ռդիսեւու
 նորէն ըսաւ .

« Ես ասանկ շուտով դարձ ընելու մը պատ-
 ճառը գիտեմ » .

Դուն ասանկ խիտտ յանդի՛ .

նութենէ մը զայրացած ըլլալ :

Բայց Հեկտոր շատ ժամ է ու դուն չես հա-
մարձակիր անոր դէմն ելլելու ։

Ահա այն եղանակը թէ ինչպէս կտրիճ
մարդուն վախկատութեան, սղջախոհ է ի-
մաստուն մարդուն անթուժկալութեան, շռա-
տաձեռն մարդուն ազահութեան ամօթը առ-
ջեւնին դնելով, կրնայ մարդ զանոնք մուլութենէ*
հեռացընել ու առաքինութեան մօտեցնել :
Բայց անանկ պակասութիւններու մէջ, ու-
րոնց որ ամենեւին դարման չկայ, պէտք է
քաղցրութեամբ խօսիլ, անանկ որ մեր յան-
դիմանութիւնները ոչ այնչափ քննութիւն
ձեռք առած երեւան, այլ կարեկցութիւն ու-
ցաւ : Բայց թէ որ բանը բոլորովին կոր-
ծանման մը առաջքն առնելու ու վերջին
աստիճանին հասած կիրքերու դէմ պատե-
րազմելու վրայ ըլլայ, ան ատեն բանը կը
մնայ ճշմարիտ ազատաբերանութեան որ ա-
մենեւին ակնածութիւն չձանձնար : Գործուած
պակասութիւնները կշտամբելը՝ հասարակօ-
րէն թշնամւոյն ընելու բանն է : Նաև Գիտ-
գինէս կ'ըսէր թէ Առաքինի ըլլալու համար
պէտք է ունենալ կամ հաւատարիմ բարե-
կամներ, կամ սաստիկ թշնամիներ, առաջին-
ները մեր պակասութեանց առաջքը կ'առ-
նեն, ետքիններն ալ մեզի կ'ուզղեն : Բայց
շատ աղէկ է մեր բարեկամներուն խրատնե-
րովը պակասութենէ ետ մնալ, քան թէ ետ-
քը անոնց համար ամբշնալ, երբոր մէկը զա-

նանք մեր երեսը տայ :

Ազատաբերանութիւնը կը պահանջէ այն-
չափ շատ արուեստ , որչափ որ ինքը բարե-
կամութեան ձեռացը մէջ ամենէն ազդու
գեղ է , երբոր դորձածուած ըլլայ յարմար
Ժամանակ , խելացի կերպով ու քաղցրու-
թեամբ բարեխառնուած , թէպէտ և իրեն
պատրաստած բժշկութիւնը , ինչպէս որ ըսի ,
շատ անգամ ցաւ տուող ալ ըլլայ : Ուրեմն
նմանինք ան վիրաբու թին որ անգամ մը կըտ-
րելէն ետեւ՝ չթողուր հիւանդը իր ցաւերուն
մէջ մնալ , հասկա վէրքը կը մեղմացընէ տա-
ծող գեղերով : Ասանկ ալ անոնք որ ճարտա-
բութեամբ յանդիմանել գիտեն , երբոր սըր-
տիմը մէջ քննութեան կսկծցնող սլաքը մոցու-
ցեր են , քաղցր ու միսթարական խօսքե-
րով յանդիմանութեան դառնութիւնը կը
բարեխառնեն : Այսպէս արհեստաւորը ար-
ձանի մը առջի հաստ գաղափարը հանելէն
ետեւ , կ'աշխատի բարակցընել անոր գծագ-
րութիւնը , բայց ո՛վ որ ազատաբերանու-
թեամբ խոցուեր և իր կրից յափշտակու-
թիւնը չսաղաղեցնելով այն վիճակին մէջ
թողուեր է , ետքէն մատուցուած դիւրու-
թիւնն ու միսթարութիւնը ամենեւին չ'ըն-
դունիր : Ուրեմն մեր բարեկամները յանդի-
մանելէն ետեւ իսկոյն զանոնք ձգել երթալէն ,
ու զանոնք վիրաւորելու կարող նուաստացու-
ցիչ խօսքերով մեր խօսակցութիւնը լմընցնե-
լէն՝ շատ մեծ ջանքով հեռու կենանք :

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆԻ

(1) Պիւթեան Ապոզոնին պատգամները՝ կռապաշտներուն հաւատքին համեմատ՝ ամենէն ճշմարիտ կը յամարուէին, անոր համար ամեն աշխարհքէ մարդ կու գար անոր բան հարցնելու :

(2) Պարոս կղզեցի ողբերգակ բանաստեղծ մը :

(3) Պարսից Կամբիւս Թագաւորին մեռնելէն ետեւ, Շմերզ մագը՝ Կիւրոսի տղան ձեւանալով Թագաւորութիւնը ձեռք ձգեց : Եօթը Պարսից մեծամեծներ միաբանեցան, որոնցմէ էին Գոբրիաս ու Դարէհ, ու Շմերզին վրայ վաղեցին պալատին մէջը : Յափշտակողը փախչելու ատեն մահճի մը ետեւ ինկաւ Գոբրիասին հետ մէկտեղ, որ մագը բաղուկներուն մէջ ամուր մը բռնած էր : Դարէհ մութ տեղը բաց սուրը ձեռքը կը վախնար որ իր ընկերին չղարնէ, բայց Գոբրիաս զարկ մի՛ վախնար կը պօռար Դարէհին :

(4) Այս խօսքը Դիանէսիոս կրտսերին վրայ է, որ գահը ելլելէն քիչ ժամանակ ետքը Դիան զինքը ստիպեց որ Պղատոնը Սիրակուսայ բերել տայ : Կամատասէրը հարկադրեցաւ երկրորդ ճամբորդութիւն մ'ընելու, ու սկիզբները աղէկ ընդունելութիւն գտաւ իշխանէն, բայց աս լաւ ընդունելութիւնը շատ երկար չտեւեց : Պղատոնին ճառերը պալատականներուն շողքօրթու թէնէն քիչ ոյժ ունեցան, ու բռնաւորը իսկոյն իրեն բնական

եղած գէշ բարուցը դարձաւ :

(5) Հաս ալ խօսքը Դիոնէսիս կրտսերին վրայ է : Ուրիշ մէկ իշխան մը չեղաւ որ ասկէ աւելի հացկատակներ ունենար և քսլորովին անոնց վստահանար :

(6) Եւպոդէս՝ նախնի կատակերդու թեան Յոյն բանաստեղծ մը, և Արիստոտիանին աշակերտն էր. շատ տեսարաններ շինած է որոնց միայն քիչ հատուածները կան հիմա : Հելլէսպոնտոսի մէջ պտըտելու ատենը մեռաւ, զոհ ըլլալով, ինչպէս որ կ'ըսեն, ոմանց վրէժխնդրութեանը սրոնց որ դպեր էր իր կատակերդութեանց մէջ, որոնք առաջին ժամանակաց սովորութեան համեմատ՝ խիստ երգիծաբանական ու կծանող խօսքերով լեցուն կ'ըլլային :

(6) Ասիկա Պտղոմէոս Փիլոսոփոսն է որ խիստ յիմարական սնասպաշտութեանց հետ շատ ամօթալի վարք ալ ունեցաւ : Մեռաւ անառակութեանց մէջ մաշելով :

(7) Այն կատակերդութիւնը որ Պլուտարքոս այս տեղ կը յիշէ, մեզի հասած չըլլալով, գիւրին չէ ան կտորին մթութիւնը լաւ բացատրել :

(8) Եւրիպիդէայ այս ոտանաւորին որ իր նախադերձութիւններուն շատին վերջի ծարր գրած է, յարաբերութիւնը, Պլուտարքոսի ասոր ետեւէն ըսած խօսքովը մէկտեղ աղէկ չհասկցուի մէկ առջի նայուածքով, բայց երկար խորհրդածելով, կը տեսնուի որ կը

նշանակէ թէ Բաղդէի խաղերը խիստ փոփոխակաւ ըլլալով, դժուարին է զանոնք նախադուշակել ու անձը պահպանել, բայց շողքորթիւնը դիւրին է ճանչնալ :

(8) Աս Ագիտը Քրիլտսէն ետեւ ամենէն դէշ բանաստեղծն էր որոնք Աղէքսանդրի բոլորտիքը կը քծնէին, ու ան շողքորթիւնը ուն ամենէն ցածը՝ որ այս իշխանին բարքը աւրելու կաշխատէին :

Այժմամարդները բաւական ծանօթ են մեզի, իսկ Արկուսներն էին՝ Ուիլիամին ըսածին նայելով կամապահայի մէջ Պիդէկոս կղզւոյն ժողովուրդները, որ Արամազդ իրենց անկարգութեանցն ու յանցանացը համար կապիկներու փոխարկեց, ասկից է Պիթեկոս կամ կապկաց կղզի անունը : Պլինիոս աս ստուգաբանութիւնը կը ջքէ, ու կը համարի թէ այս անունը առաջ եկած է հոն շինուած տակառներէն, և թէ Յոյնք (Բիդոս) կ'անուանեն :

(10) Արմոզիոս և Արիստոգիտոն երգուընցեր էին Պիսիստրատին տղոցը դէմ, որոնք որ իրենց հօր բռնաւորութեանը յաջորդեցին, և անոնցմէ մէկը մեռուցին : Աթենացիք ի պատիւ անոնց հասարակաց հրապարակին մէջ արձաններ կանգնեցին :

(11) Ասիկա աս անունով վերջին թագաւորն է, և հայր ան Պերսէոսին որուն համար Պուլտարքոս կը խօսի. և Մակեդոնացւոց ատրութիւնը աս տղին վրայ վերջացաւ :

(12) Կերեւայ որ Պուլտարքոսին ըսած ա.

տենը Մեզարա քաղաքը Յունաստանի մէջ նշանաւոր աստիճան մը չ'ունէր և հետեւաբար վճիռ տալու մէջ ալ քիչ ազդեցութիւն և Ուստի Լիւսանդրի աս պատգամաւորին տըւած պատասխանը պիտի նշանակէ՝ թէ անոր վճռական ոճը որ ձեռք առեր էր Յունաստանի ընդհանուր օգուտներուն վրայ իր կարծիքը ժողովին մէջ ըսելու ատեն, կարօտութիւն պիտի ունենային հաստատուելու այլ աւելի նշանաւոր քաղաքի մը պատուոյն վրայ որուն նման չէր Մեզարա :

(13) Պլուտարքոս՝ նախատանօք կը դնէ Ազամեճնոնին բերանը աս յանդիմանութիւնը որ Պալլաս ըրած է Դիոմէդէսին :

ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՍՏԱՏԵԱԼ Ի ԴՅՈՒՆՈՒՅՐ 1859

Կ Ո Ս Տ Ա Ն Ի Ն Ո Ւ Պ Օ Լ Ի Ս

Այս Ընկերութեան նղատակն է, արգալին շէջուաւ գրքեր տղեշ տաշ եւ ջանսնք առանց շահու բուն իրենց եչած գիներոյց ծախեշ :

Այս Ընկերութեան կանոններն են .

Ա. Ընկերութեան խորհրդական անգամները 10 հոգի են՝ եւ այս գործիս ձեռք ջարկած են, Ընկերութեան ամեն հոգերն իրենց վրայ, եւ ամեն կերպոյ իրենք դատասխանատու ըլլաշու դայմանու :

Բ. Այս Ընկերութեան հազորք ըլլաշ ու ջոցց՝ կանխիկ դիտի վճարե տարին 20 ցուրուշ :

մէկ տարեկան տոմսակագիրն :

Գ. Այս 20 ցու.բու.շմոց տոմսակներէն 'ի ջատ , ո՛ր 200 ցու.բու.շ վճարէ , ու 200 ցու.բու.շնոց տոմսակ մ'առնէ մէկ անգամ , այն անձը մշտնջենաւ.որ ընկեր կը համարուի , եւ անոր անու.նը կ'արձանագրու.ի Ընկերութեան Գիւ.անիսն մէջ :

Դ. Այս 200 ցու.բու.շնոց տոմսակներէն հաւ.ւարու.ած ստակոյն աչ գրբեր դիտի տղջին . բայց անանկ որ ամեն մէկ մշտնջենաւ.որ տոմսակ , տարին 20 ցու.բու.շ տարեկան տոմսակներու շահ տայ . եւ այս շահը՝ 20 ցու.բու.շնոց տոմսակներէն հաւ.ւարու.ած ստակոյն մէկտեց ետեւ.է ետեւ. գիրք տղեշու. դիտի գործա.ծու.ի , ու մէկ գրբի մը քանի ցու.բու.շ ծախք որ երթայ՝ անկէ եւ.եջ գնոյ չը դիտի ծախու.ի :

Ե. Ընկերութեան անգամները դարտական են ամեն տարու.ոյն վերջը յառաջիկայ տարու.ան տոմսակներու.ն ետեւ.ը իրենց ամեն գործա.նութեանց եւ Ընկերութեան եշեւ.մտից հա.շիւ.ը մանրամասնաբար հրատարակեշու. , եւ ասկէ 'ի ջատ Ընկերներու.ն անու.նները ցանկ մը ընեշու. :

Զ. Այս Ընկերութիւ.նը 10՝ տարի դիտի շարու.նակու.ի , եւ իր դայմանածամը չքանա.շէն ետեւ.՝ եթէ գործը յաջոց վիճակի մէջ ըջ.շայ , գարձեաչ դիտի շարու.նակու.ի 10 տարի , եւ այլն : Աղա թէ ոչ , Ընկերութեան գրամա.գշու.խը եւ ստացու.ածքը՝ այսինքն գիրբերը , թէ Մայրաքաջաքիս եւ թէ ուրիշ քաջաքաց

եւ գիւցից անբարեիկ եւ անեկամուտ դըղ-
րոցներուն յիտի բաժնուի ըստ արժանոյն .
եւ այս աչ յիտի հրատարակուի ժամանակին՝
Ընկերութեան անդամներուն կոչմէն :

Է . Ընկերութիւնը՝ գրագեւ՝ այլ իրենց
գրութիւնները հրատարակելու անբաւական
անձինքը խրատուսելու համար՝ կը խնայանայ
անոնց կոչմէն իրեն ընծայուած գրութիւն-
ներն տունելու , եւ իր ծախքոյց տղեղ տա-
չոյց հրատարակելու , եթէ ջանոնք հրատարա-
կութեան արժան գատե , եւ նոյն ժամուն ա-
նոնց ծախքը հոգաշու ղաարաստ ստակ ունե-
նայ : Եւ եթէ Ընկերութիւնը բաւական հա-
րքստութիւն ունենայ՝ նոյն գրութեանց հե-
ջինակներուն հատուցում մ'աչ կ'ընէ :

Ը . Ընկերութիւնը յիտի ջանայ ամեն ա-
տեն՝ միայն ազգին ամենահարկաւոր եւ օգ-
տակար եւ գոյրոցական գրքեր հրատարա-
կելու , եւ մանաւանդ բարոյականի եւ կրօն-
քի գեմ գիրք տղեղ չը տաշու , եւ Ընկերու-
թեան անուցը՝ իւր հրատարակած գրոց ճա-
կասը յիտի գրոշմուի :

Թ . Ընկերութեան կանոնները կրնան տա-
րեգլխէ՝ ի տարեգշուի փոփոխութիւններ կը-
րել , Ընկերութիւնը աւելի հաստատուն եւ
աւելի օգտակար ընելու համար . եւ այս փո-
փոխութիւններն աչ տոմսակներուն ետեւը
կը տեսնուի :

Ճ . Ընկերութիւնը երբէք առանձին մեկու-
մը իր գործոցութեանց ջրացոյց համար չը ղի-
տի տայ :

ԱՆՈՒԱՆՔ

ՄՇՏՆԶԵՆԱՒՈՐ ԲԱԺՆՈՐԴԱՑ.

Անուխեան Եսայի .
Գաբամաճեան Լէոն .
Գաբամաճեան Յովսէփ .
Գաբամաճեան Սարգիս .
Գաբամաճեան Տիգրան :
Խորասանճեան Ալիքսան .
Կրճիկեան Անդրանիկ Պէյ .
Հարկնց Նշան .
Մարգարեան Յարութիւն .
Մարկոսով Դանիէլ .
Մէրասեկտիեան Պօղոս .
Յակօբեան Յովհաննէս .
Յովակիմեան Գառնիկ .
Սախաեան Կարապետ .
Սղարթալեան Յովհաննէս .
Վարպէտեան Ահարօն .

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՍ ԱՐԴԵԱՄԲՔ ՏՊՈՒԱԾ ԳՐԻԵՐԸ

Բարոյականք Պշուտարբեայ (Հաս. Բ. Գ.)
Առաջնորդ Հայ ընթերցանութեան, կամ
Նոր Գերական .
Նախագիտելիք Մանկանց .
Համալսօսութեան արտատպութիւն .



«Ազգային գրադարան




NL0015439

«Ազգային գրադարան



NL0015438

«Ազգային գրադարան



NL0015437

